2025, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (671)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Մայր Աթոռում կատարվեց Տյառնընդառաջի նախատոնակը

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է Տյառնընդառաջը՝ 40-օրյա մանուկ Հիսուսի՝ տաճարին ընծայման տոնը, որի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան:

Տերունական տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցականների հանդիսավոր թափորի ուղեկցությամբ մուտք գործեց Մայր տաճար, ուր Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Երեկոյան ժամերգություն:

Ժամերգությանը հաջորդեց նախատոնակը, ապա տեղի ունեցավ տարվա առաջին Անդաստանի կարգը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը:

Այնուհետև «Քրիստոս փառաց» տաղի ներքո Մայր տաճարի Իջման Սուրբ Սեղանի կանթեղից վառված մոմով Նորին Սրբությունը Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու լույսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Արարողության ավարտին եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Մայր Աթոռի միաբանական շենքի շրջափակ, ուր ներկայությամբ բազում հավատավոր հայորդիների՝ Ամենայն Հայոց Հովվապետի ձեռամբ վառվեց Տյառնընդառաջի խարույկը: Վեհափառ Հայրապետը նաև հավատավոր հայորդիներին ընծայեց խաչեր: Տյառնընդառաջի տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է Նորապսակների օրհնության օր: Այս կապակցությամբ փետրվարի 14-ին՝ Մայր տաճարում և բոլոր եկեղեցիներում մատուցվող սուրբ պատարագի ավարտին, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տոնախմբվեց Տյառնընդառաջը

Փետրվարի 14-ին՝ 40-օրյա մանուկ Հիսուս Քրիստոսի տաճարին ընծայման տոնին, Միածնաէջ Մայր տաճարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց սուրբ և անմահ պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ոսկան աբդ. Ոսկանյանը:

Իր քարոզում հայր սուրբն անդրադարձ կատարեց տոնի խորհրդին՝ մասնավորաբար նշելով. «Մանուկ Հիսուս եկավ որպես խաղաղության իշխան՝ մարդկանց փոթորկահույզ սրտերի մեջ սերմանելու երկնային խաղաղությունը: Նա եկավ որպես աշխարհի Փրկիչ՝ փրկելու համար աստվածաստեղծ մարդ արարածին և Իր նվիրական առաքելությամբ կամրջելու երկինքն ու երկիրը»:

Վերջում հայր Ոսկանը պատգամեց հավատացյալ ժողովրդին անվարան գնալ Տիրոջ կենսատու ու անմար Լույսին ընդառաջ և աղոթել նաև բոլոր այն ամուսնական զույգերի համար, որոնք իրենց կյանքն սկսում են տերունական լույսի, խաղաղության ու փրկության ապավինությամբ:

Հավարտ սուրբ պատարագի, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ: Օրվա խորհրդի խաչքավորն էր ԵՀԽ-ի հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը:

Տոնի առիթով Նորին Սրբությունն իր հայրապետական օրհնությունն ու մաղթանքները բերեց նորապսակներին՝ նշելով, որ Տյառնընդառաջին ամենքս Սուրբ Սիմեոն Ծերունու նման փառավորում ենք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին և ամրապնդում վճռականությունը Տիրոջն ընդառաջ ելնելու, միշտ Տիրոջ հետ լինելու և ապրելու ու ընթանալու Աստծու կամքի համաձայն:

Հայոց Հայրապետն ընդգծեց, որ տոնի նախօրեին, ժողովրդական ավանդության համաձայն, նորապսակների ընտանեկան օջախներում խարույկ է վառվում, և բերկրանքով ու ցնծությամբ տոնախմբում է Տյառնընդառաջը: Այս խորհրդին համահունչ՝ Տյառնընդառաջի տոնը հռչակվել է Նորապսակների օրհնության օր, որպեսզի եկեղեցիներում, հավարտ սուրբ պատարագի, նոր ամուսնացած զույգերն օրհնություն ստանան, և Տիրոջ առատ շնորհները բաշխվեն իրենց ընտանիքներին:

Դիմելով նորապսակ զույգերին՝ Նորին Սրբությունն ասաց. «Այս օրհնյալ պահին Մենք Մեր ջերմ շնորհավորանքն ենք բերում բոլոր նորապսակ զույգերին և մաղթում երջանկություն, սիրառատ ընտանեկան կյանքի երկար տարիներ: Թող Տերը պարգևի ձեզ բազում արժանավոր զավակներ և պահպանի ամենքիդ Իր շնորհների և ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո: Հայրական Մեր հորդորն է, որ միշտ վառ պահեք հավատքի լույսը ձեր հոգիներում ու հարկերում, ապրեք Սիմեոն ծերունու բարեպաշտությամբ՝ ձեր սրտերում հանապազ կրելով սերը Աստծու, հայրենիքի և միմյանց հանդեպ»:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց սուրբ պատարագին մասնակից նորապսակ զույգերին և Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող նորապսակ սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանի:

Հայոց Հովվապետը, մեկ անգամ ևս իր հայրական օրհնությունն ու շնորհավորանքները բերելով նորապսակ երիտասարդներին, գոհունակությամբ արձանագրեց, որ այս տարի ընդունելության են արժանացել նաև աշխարհական նորապսակ հայորդիները:

Նորին Սրբությունը հորդորեց նորապսակ զույգերին ապրել սիրով ու ավետարանական ոգով, լինել միմյանց զորակից և չընկրկել դժվարությունների առաջ: Հայոց Հայրապետը մաղթեց նաև, որ Տիրոջ լույսն ու ջերմությունը մշտական ներկայություն լինեն իրենց նորակազմ ընտանիքներում և ապրեն առողջ ու երջանիկ կյանքով: Վերջում Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց նորապսակ զույգերին և ընծայեց նվերներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Շվեյցարիա

Փետրվարի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Շվեյցարիա:

Մեկշաբաթյա այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների և Շվեյցարիայի հայոց թեմի վարչականների հետ:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տ. Վարդան եպս. Նավասարդյանը, ազատվելով Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդի պաշտոնից, նշանակվել է Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ:

Տ. Շնորհք աբդ. Սարգսյանը, ազատվելով Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպես եկեղեցականաց և երիտասարդաց վերապատրաստման ծրագրերի փոխտնօրեն:

Վաշինգտոնում կայացած Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովին և Ազգային աղոթքի նախաճաշին իր մասնակցությունը բերեց Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը

Փետրվարի 4–5-ը Վաշինգտոնում տեղի ունեցավ 5-րդ ամենամյա Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովը, իսկ փետրվարի 6-ին՝ Ազգային աղոթքի նախաճաշը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հիշյալ գագաթնաժողովին և Ազգային աղոթքի նախաճաշին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը: Միջոցառմանը ուղերձով հանդես եկավ ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը, ինչպես նաև բանախոսություններ ներկայացրեցին քաղաքական, կրոնական գործիչներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և փորձագետներ:

Նույն օրերին կայացած Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովը համախմբել էր ԱՄՆ-ի կոնգրեսականների, տարբեր երկրներից ժամանած բարձրաստիճան պաշտոնյաների, հոգևոր առաջնորդների, իրավապաշտպանների՝ քննարկելու կրոնական ազատության, մարդու իրավունքների հիմնախնդիրներն ու մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները: Գագաթնաժողովի ընթացքում ելույթ ունեցավ նաև ԱՄՆ-ի փոխնախագահ Ջ. Դ. Վենսը՝ վերահաստատելով ԱՄՆ-ի հանձնառությունը պաշտպանելու կրոնական համայնքների իրավունքները: Գագաթնաժողովի նիստերին մասնակցում էր նաև Տ. Վիգեն արք. Այքազյանը (ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմ): Հայր Գարեգինն իր մասնակցությունը բերեց նաև ԱՄՆ-ի Կոնգրեսում գագաթնաժողովի շրջանակներում կազմակերպված նիստին՝ բարձրաձայնելով Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության, բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության, ինչպես և Ադրբեջանում պահվող հայ գերիների ազատ արձակման հրամայականը: ԱՄՆ-ի կոնգրեսականների հետ առանձին հանդիպումների ընթացքում հայր սուրբը ներկայացրեց մանրամասն զեկույցներ, որոնք պատրաստվել էին Ամերիկայի հայ իրավաբանների ասոցիացիայի հետ համատեղ: Զեկույցներում փաստագրված էին Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների շարունակվող խախտումները և մշակութային ժառանգության ոչնչացումը, որոնք պաշտոնապես ներկայացվեցին ԱՄՆ-ի օրենսդիրներին՝ հարցի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և գործուն քայլերի ձեռնարկման նպատակով:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Համահայկական ուխտագնացություն՝ ՀԵՀԵՄ 25-ամյակի առիթով

(հայտարարություն)

Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և ՀԵՀԵՄ-ի հոգևոր առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի առաջնորդությամբ կենտրոնական գրասենյակը կազմակերպում է ՀԵՀԵՄ-ի կազմավորման 25-ամյակին նվիրված համահայկական ուխտագնացություն, որը տեղի կունենա ս. թ. հուլիսի 2–7-ը:

«Քրիստոնյա ընտանիքը՝ հայ ինքնության խարիսխ» խորագրի ներքո հարյուրավոր երիտասարդներ հայաստանյան և աշխարհասփյուռ թեմերից կմեկտեղվեն հայրենիքում:

Ուխտագնացության շրջանակներում երիտասարդները հնարավորություն կունենան հանդիպելու Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի հետ, ապա կայցելեն Հայաստանի սրբավայրեր, ինչպես նաև ընտանիքի թեմայով տեղի կունենան խմբային հանդիպում-քննարկումներ հոգևոր հայրերի հետ:

Համահայկական ուխտագնացությունը կամփոփվի սուրբ և անմահ պատարագով և փակման խնջույքով:

Մասնակցության համար հարկ է դիմել թեմի երիտասարդական հարցերով պատասխանատուներին:

Սիրելի՛ երիտասարդ, սիրով սպասում ենք քեզ հայրենիքում՝ միասին անցկացնելու հինգ անմոռանալի երիտասարդական օր:

ՀԵՀԵՄ-ի կենտրոնական գրասենյակ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միրո բարեխոսության խորհրդանիշ կերպարը. Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների ավանդությունը

Սուրբ Ծննդից հետո՝ հունվարի 18-ից մինչև փետրվարի 23-ը, Հայ Եկեղեցում տոնախմբվում է Սուրբ Սարգսի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների հիշատակը:

4-րդ դարում Կոստանդիանոս Մեծ կայսրը Սարգսին նշանակում է Կապադովկիայի իշխան: Սակայն երբ մահանում է կայսրը, նրան հաջորդում է Հուլիանոս Ուրացողը, որն սկսում է հալածել քրիստոնյաներին՝ այդ թվում Սարգսին: Կայսերական հալածանքներից խույս տալու համար Սուրբ Սարգիսը հեռանում է Կապադովկիայից: Սկզբում գալիս է Հայաստան, ուր թագավորում էր Տիրանը: Քանի որ Հայոց արքան չէր ցանկանում վատթարացնել հարաբերությունները կայսեր հետ, խնդրում է Սարգսին հեռանալ և հաստատվել Պարսկաստանում: Այդտեղ սրբին ընդունում է Շապուհ արքան և հաշվի առնելով նրա ռազմական հմտությունները՝ նշանակում զորագնդերի հրամանատար: Պարսիկ շատ զինվորներ, տեսնելով Սարգսի բարեպաշտ վարքը և ազդվելով նրա քարոզչությունից, ընդունում են քրիստոնեություն: Այդ մասին իմանալով՝ Շապուհ արքան պարտադրում է նրան զոհեր մատուցել կուռքին: Սուրբ Սարգիսը ոչ միայն հրաժարվում, այլև կործանում է կուռքը: Դրանից հետո զայրացած հեթանոսներն իրենց կրոնական առաջնորդների՝ մոգերի հետ հարձակվում և սպանում են Սարգսի որդուն՝ Մարտիրոսին (նա նահատակվում է ծեծկռտուքի ժամանակ): Հետո Շապուհը հրամայում է բանտարկել Սարգսին՝ հույս ունենալով, որ զորավարը կզղջա: Բայց այդպես էլ չկարոնալով նրան քրիստոնյա հավատքից շեղել՝ ի վերջո գլխատում են:

Ըստ ավանդության՝ Սարգիս զորավարի գլխատման ժամանակ նրա մարմնի վրա ուժեղ լույս է ծագում՝ ցույց տալով սրբությունը: Տեսնելով հրաշքը՝ Սուրբ Սարգսի քարոզչությամբ քրիստոնյա դարձած տասնչորս զինվորներն էլ ավելի համարձակ են դառնում և փորձում վերցնել զորավարի մարմինը՝ արժանավայել ամփոփելու համար: Զինվորներին նույնպես սպանում են քրիստոնյա լինելու համար:

Հետագայում մի քանի հավատավոր մարդիկ Սուրբ Սարգսի մասունքները տարել և ամփոփել են Համիան քաղաքում: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Ս. Մեսրոպ Մաշտոցն այնտեղից վերցրել և Հայաստան է բերել Ս. Սարգսի մասունքները՝ ամփոփելով սկզբում Կարբիում, հետո՝ Ուշիում: Այդ մասունքների վրա հիմնվել է եկեղեցի, որը հետագայում դարձել է մեծ վանական հաստատություն: Բարձրադիր այդ վանքը կանգուն է եղել մինչև 1827 թ. երկրաշարժը, որի ժամանակ գրեթե հիմնահատակ ավերվել է:

2000-ական թթ. վանքի տարածքում սկսեցին պեղումներ կատարել՝ վանքը վերականգնելու նպատակով, և պատահմամբ խորանի տակ հայտնաբերվեցին Սուրբ Սարգսի մասունքները: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի տնօրինությամբ պատրաստվեց գեղեցիկ մասնատուփ-աջ, որտեղ ամփոփվեցին սրբի մասունքներից: Յուրաքանչյուր տարի՝ Սուրբ Սարգսի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների հիշատակության օրը, մասունքը տարվում է Արարատյան հայրապետական



թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի, մատուցվում է սուրբ պատարագ, իսկ ավարտին հավատացյալները հնարավորություն են ունենում մոտենալու և բարեխոսություն խնդրելու սրբից:

Իրականում Սուրբ Սարգիսը հայ չէր, նույնիսկ Հայաստանից ստիպված է եղել հեռանալ՝ քաղաքական պատճառներով, բացի այդ՝ նահատակվել է ոչ թե Հայաստանում, այլ Պարսկաստանում, այդուհանդերձ՝ շարունակում է հայերի շրջանում մեծ ժողովրդականություն վայելել և հատկապես եկեղեցական շրջանակներում վաղ շրջանից հիշատակվող սուրբ է: Այնքան է տարածվել սրբի հանդեպ հարգանքը, որ ավանդույթի ուժով վերջինս դարձել է սիրո բարեխոսը, այդ պատճառով էլ առավել սիրված է դարձել երիտասարդների շրջանում:

Սուրբ Սարգսի տոնը նշվում է Առաջավորաց պահքի շաբաթ օրը: Այս պահքը հաստատել է Գրիգոր Լուսավորիչը, և համարվում է խիստ պահքերից մեկը, որի ժամանակ միայն հաց և աղ են ուտում: Ժողովրդական մտածողությամբ՝ սուրբն առավելապես բարեխոսում է պահքը պահողների համար: Հավատացյալների պատկերացումներում և նաև եկեղեցական պատկերներում Սուրբ Սարգիսը պատկերվում է գորշ և արագավազ ձիո հեծած, այդ պատճառով էլ համարվում է սիրահարների արագահաս սուրբը: Սարգիս զորավարն ընկալվում է նաև որպես ընտանիքների, գերեվարվածների բարեխոս և բնական աղետներից՝ մասնավորապես կարկտից, բքից և ցրտից ազատող սուրբ:

Հայաստանում այնքան տարածված են Սուրբ Սարգսին նվիրված տոնակատարությունները, որ մինչև այսօր էլ որոշ շրջաններում տոնի նախորդ գիշերը սկուտեղի վրա մանր փոխիոնդ են լցնում և դնում տան որևէ անկյունում՝ հուսալով, որ Սարգիսը կայցելի, և ձիու պայտի հետքը կմնա փոխիոնդի վրա: Ըստ ժողովրդական բարեպաշտական մտածողության՝ սա համարվում է հաջողության նշան:

Լիանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայիս սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներսես Աշտարակեցին՝ ազգային-ազատագրական շարժման առաջնորդ

Ներսես Աշտարակեցի — 255

19-րդ դարի նշանավոր ազգային-եկեղեցական գործիչ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցին (1770–1857 թթ.) մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ: Նա առաջնորդել է հայոց ազատագրական պայքարը 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, երբ իշխում էր մեծ խանդավառություն՝ հաղթանակած ռուսների միջնորդությամբ վերջնականապես թոթափելու մահմեդական դարավոր լուծը, փրկելու ժողովրդին ծանր կացությունից, ստեղծելու ինքնիշխան պետություն:

Սոցիալ-տնտեսական, ազգային-քաղաքական կյանքում առկա ճգնաժամի լուծման միակ հնարավոր և երկարատև եղանակը լիարժեք անկախությունն էր Օսմանյան Թուրքիայի և ապա Պարսկաստանի տիրապետությունից: Ուստի՝ ազատագրական շարժման առաջադեմ շատ գործիչներ իրենց հայացքը հառում էին քրիստոնյա Եվրոպային, որին հաջողվել էր դեռ միջնադարից պաշտպանել տարածքային ամբողջականությունը և սեղմել մահմեդական օղակը: Սակայն, պայմանավորված Անդրկովկասում ռազմաքաղաքական զարգացումներով և ռուսական տարածքների ընդլայնմամբ, Ռուսաստանում հայությանը տրված առանձնաշնորհումներով (լեզվական, կրթական, տնտեսական), ազգային կյանքն առաջնորդող հեռատես գործիչները հակվում են հյուսիսային քրիստոնյա դաշնակից Ռուսաստանի կողմը՝ լիահույս, որ ռուսական զորակցությամբ հնարավոր կլինի տնօրինել սեփական ճակատագիրը և կերտել փրկության ճանապարհը: Այդ տեսլականով էր տոգորված նաև իր կյանքը Եկեղեցուն և հայրենիքին նվիրաբերած Ներսես Աշտարակեցին:

Հակոբ Հովնաթանյան, Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու դիմանկարը, 1850 թ.

Ներսես Աշտարակեցին (ավազանի անունը՝ Թորոս) ծնվել է 1770 թ. փետրվարի 13-ին Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի Աշտարակ գյուղում (այժմ՝ քաղաք)՝ քահանայի ընտանիքում: Եկեղեցական մատյաններում պահպանված տեղեկությունների համաձայն՝ նա սերում էր Կամսարական-Շահազիզյան տոհմից, հետո նա Եփրեմ Ա Զորագեղցի Կաթողիկոսից ստացավ իր ազնվական ծագման հավաստիացումը: Դեպի Եկեղեցի նրան ուղղորդել է կնքահայրը՝ Գալուստ արքեպիսկոպոսը: Ներսես Աշտարակեցին Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցի ամենափայլուն և ուշիմ աշակերտներից մեկն էր, բացի այդ՝ վայելչագրությամբ անգերազանցելի էր և համարվում էր ամենալավ կոնդակ գաղափարողը: Նա եռանդուն մասնակցություն է ունենցել Ղուկաս Ջահկեցի Կաթողիկոսից հետո Էջմիածնում սկսված կաթողիկոսական ընտրության գործընթացին:

Աշտարակեցին իր ժամանակակիցների հուշերում, նամակներում և պաշտոնական հաղորդագրությունների մեջ հիշատակվում է որպես մարդկային բարձր և առաքինի որակներով օժտված, հայրենաշեն անհատականություն, հմուտ և եռանդուն ազգային-եկեղեցական գործիչ, հայ ժողովրդի բարօր գալիքի կերտման համար պայքարող ուղղամիտ առաջնորդ, «Ռուսիո պետական շահերը պաշտպանելու դիմակին տակ՝ Հայաստանի շահերը պաշտպանող» (Ադդէ քհնյ. Փայլակեան, Եկեղեցական պատմութիւն հայոց, Փարիզ, 1942, էջ 277), փառահեղ, հզոր մարտիկ, որին նրա կենսագիր Ալեքսանդր Երիցյանը տեսնում է ռուս հրամանատարների հետ հավասար դիրքում (Ա. Երիցեան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 355):

Հայության գերագույն շահերի պաշտպան, անընկճելի այս հոգևորականը մեղադրվում էր ազգայնական գործունեության համար: Գեներալ-ֆելդմարշալ, «կոմս Էրիվանսկի» Իվան Պասկևիչը նրան ամբաստանում էր Ռուսաստանից անցած հայկական տարածքներն ընդարձակելու, Սուրբ Էջմիածնի հարստությունները Հայ Եկեղեցուն հանձնելու, Մայր տաճարը պաշտպանելու համար 200 հոգանոց զորաջոկատ ստեղծելու համար: Տարբեր շահեր արտացոլող այս անհանգստությունների մեջ երևում են արիասիրտ եկեղեցականի ազգանվեր գործելակերպը և անջատողական կուսակիցների և օտարազգի ամբոխավարների դավադրությունների դեմ պայքարելու վեհանձն ոգին: Ռուսաց արքունիքին իր մեծ հավատարմության շնորհիվ՝ նա վայելում էր կառավարության ներկայացուցիչների սերն ու երախտագիտությունը, կայսերական պատիվն ու մեծարանքը:

Այնքան վստահելի և պատկառազդու է եղել Աշտարակեցին, որ Վիրահայոց թեմի առաջնորդության ստանձնումից հետո նշանակվել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ, որի հովվական գործունեության տարածքում էին նաև ռուսական երկու մայրաքաղաքները՝ Մոսկվան և Պետերբուրգը: Եկեղեցական այս նշանակումը ոչ թե աքսոր էր, ինչպես ի սկզբանե մեկնաբանվել է, այլ ամենից առաջ ռուսական քաղաքական հեռահար շահերի արտահայտություն: ➥ էջ 4, 7

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Վահան Տերյանի ազգային գործունեությունը և մահը

Վահան Տերյան — 140

1914 թ. Նվարդ Թումանյանին հղած մի նամակում Վահան Տերյանը գրում էր. «Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է, դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը, այդ չափով ենք մոտենում մենք ամեն ինչին և գուցե դրա համար անզոր ենք դառնում ու մեռնում ենք վաղ.... Դուք երևակայել չեք կարող, թե ինչպես է անցնում իմ կյանքը. ոչ թե անցնում է, այլ այրվում մի ներքին դառն կրակով, և ես անզոր եմ այդ կրակի դեմ ու անօգնական: Եվ ես երբեմն մտածում եմ, որ դա ունի իր խորին ու վսեմ իմաստը: Չէ որ այդպես, իմ հոգու նման, այրվում է և իմ երկիրը, «իմ Նաիրին»....»:

Ազգային բեկված կյանքի ճանապարհին Տերյանը մշտապես կանգնած էր հաստատ, ծանր մտորումներով, միացյալ, անկախ, հոգևոր Հայաստանի վերակերտման համառ որոնումներով: Դա նա ապացուցեց թե՛ իր գրական, թե՛ քաղաքական գործունեությամբ:

Տակավին Թիֆլիսում սովորելիս տասներեքամյա Վահանը հաճախում էր ժամանակի ազգային-հեղափոխական պատանեական միության՝ «Ծիածան»-ի ժողովներին: «Անենահիրատապ խնդիրը,– հիշում է Պ. Մակինցյանը,– որ ծեծվում էր այդ միջավայրում, Հայկական հարցն էր, տաճկահայերի դատն ու հեղափոխական շարժումը»: 1905 թ. ապրիլին «Ծիածան»-ի գաղափարակիր ընկերուհուն՝ Շվեյցարիայում գտնվող Ս. Օտարյանին, Տերյանը գրում է. «Անդրանիկի մասին գրածներդ ինձ շատ հետաքրքրում էին, և ես ուզում էի Ձեզ հայտնել նրա մասին՝ գիտենալով, որ նա այդտեղ է», իսկ մայիսի 6-ի նամակում խնդրում է. «Ուղարկեցեք Անդրանիկի պատկերը, երևի այդտեղ լավը հանած կլինեն: Շատ շնորհակալ կլինեմ»: 1905-ի նոյեմբերի 9-ի նամակում Ս. Օտարյանին Մոսկվայից հայտնում է. «Այստեղից Կովկաս է ուղարկվում մոտ ժամանակներս 200 000 ռուբլու զենք: Եթե գնալու լինեմ, իհարկե, կարողացածիս չափ կտանեմ»:

1905 թ. դեկտեմբերին Տերյանն արդեն Կովկասում էր, ճեմարանական ընկերոջ՝ Պ. Մակինցյանի հետ Թիֆլիսում անցնում է Հայ հեղափոխական դաշնակցության շարքերը, գործուղվում Շիրակի գյուղեր: Տերյանագիտության մեջ հաճախ շրջանցվել, ավելին՝ բացասվել է պոետի կենսագրական այս փաստը: Տերյանի ընկերը՝ Ց. Խանզադյանը, հիշում է. «1905 թ. դեկտեմբերին նրանք Կովկաս եկան ու Թիֆլիսում «քննություն» տալուց հետո գրկաբաց ընդունվեցին դաշնակցական պրոպագանդիստներ և ուղևորվեցին Շիրակի շրջանը»: Նույնն է փաստում Տերյանի գաղափարակից ընկերը՝ Պ. Մակինցյանը. «Իր մերձավոր ընկերներից մեկի հետ անցնում է Շիրակ՝ հեղափոխական աշխատանք կատարելու նպատակով: Տերյանն անցնում է մոտ 40 գյուղ: Ղոշավանքից անցնում է Անի, որ տեսնում է ձմեռ ժամանակ առաջին և վերջին անգամ»: Ինքը՝ Տերյանը, 1906 թ. Ս. Օտարյանին գրում է. «Թիֆլիսում մտա Դաշն. կազմակերպության մեջ իբրև պրոպագանդիստ: Մերոնք լավ են այժմ, բավականին զինված են: Մանավանդ «Դաշնակցությունը» մեծ դեր է խաղում և, իմ խորին համոզմունքով, եթե չլիներ նա, շատ տեղերում ոչ մի հայ չէր մնա: Թիֆլիսի ընդհարումների ժամանակ այնտեղ էի և աչքովս տեսա Դաշնակց. կատարած գործը: Կռվի մեջ Դաշնակց. հավասարը չունի, բայց պրոպագանդը շատ թույլ է»: 1906 թ. մարտի 20-ին Տերյանը Ա. Իսահակյանին հայտնում է, որ թարգմանել է Դաշնակցության ծրագիրը և ուզում է հրատարակել: «Մի երեկույթ էլ սարքեցինք ճեմարանում Դաշնակց. վերաբերյալ, ես աշխատեցի ապացուցանել, որ Դաշն. սոցիալիստական կազմակերպություն է, և ծանոթացրի մեր մեծ աշակերտներին ծրագրին»: Նույն թվականին, սակայն, ընդհարվելով դաշնակցական մի խումբ հայդուկների հետ, Տերյանը հեռանում է Դաշնակցությունից: Դաշնակցության և Տերյանի ճանապարհները բաժանվում են՝ միառժամանակ օտարվելու և հակադարձվելու ընթացքով, իսկ հետագայում՝ չընկալված դարձի դրամատիկ ավարտով: 1907 թ. Տերյանն արդեն գաղափարապես հարում էր սոցիալ-դեմոկրատներին, բայց նրա քաղաքական կողմնորոշման կիզակետում մշտապես մնաց միացյալ և ազատ հայրենիքի՝ Նաիրիի գաղափարը: Ազգային կյանքի հեռանկարներով մտահոգ՝ 1914 թ. «Մշակ»-ում հրատարակում է «Հոգևոր Հայաստան» հոդվածը՝ նպատակ ունենալով «Հայության հավաքում կամ հայության կազմակերպում գաղափարական իմաստով»: Հոդվածում Տերյանը միաժամանակ հաստատագրում էր իր քաղաքական սկզբունքը Հայկական հարցի նկատմամբ. «Ամեն մի հայ պիտի շահագրգռված լինի թուրքահայերի ազատագրումով, ինչ ձևով էլ լինի այդ ազատագրումը»:



Տերյանագիտության մեջ հակասական մեկնաբանությունների և տարակարծությունների առիթ է տվել նաև Տերյանը և կամավորական շարժումը հարցադրումը: Տերյանը հայկական կամավորական շարժմանը չզինվորագրվեց. 1912 թ. նա ազատվել էր զինվորական ծառայությունից, 1917 թ. ևս՝ «աջ թոքի տուբերկուլյոզի պատճառով ճանաչվելով միանգամայն ոչ պիտանի զինվորական ծառայության համար»: Պոետի համար ճակատագրական եղավ ամուսնությունը Սուսաննա Պախալովայի հետ 1911 թ.: Սուսաննան հիվանդ էր թոքախտով, և Տերյանի մեջ հիվանդության նշանները երևան են գալիս 1912 թ.:

Պ. Մակինցյանը գրում է, թե Վահան Տերյանը «կամավորական շարժման հանդեպ բռնում է ժխտողական դիրք»: Ց. Խանզադյանը Մակինցյանի վերոնշյալ տողերի լուսանցքում գրել է՝ Ընդհակառակը: Հուշագիր Խ. Փորքշեյանը ևս գրում է. «Հակառակ էր կամավորական շարժմանը, համարում էր այն վնասակար»: Ո՞րն է իրողությունը: 1915 թ. հուլիսին Տերյանը գրում է, թե չնայած՝ մտքի առարկություններին, շատ էր ուզում կամավոր գնալ: Ի դեպ, կամավոր էր նաև նրա ավագ եղբայրը և գաղափարի նախկին ընկերը՝ Արամ Տեր-Գրիգորյանը: Մտքի առարկությունն այն էր, որ Տերյանը Հայկական հարցի լուծումը կապում էր ոչ թե ազգային-ազատագրական կամավորական շարժման, այլ Ռուսաստանի արմատական վերափոխման հետ. «Մենք չէինք կամենա, որ մեր ժողովուրդը ոտնատակ գնար այս շփոթ օրերում, որ նա զոհ լիներ սխալ գաղափարախոսության, սխալ ըմբռնված ազգային իդեալի և վերջը հուսահատության ու հիասթափության գիրկն ընկներ: ➥ էջ 4, 6, 8

Վահան Տերյանի ազգային գործունեությունը և մահը

➥ էջ 3

Մենք թերահավատ ենք դեպի այդ՝ մի հարվածով, մի թեկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանը: Մեր խորին համոզումով, որքան և կարևոր ու խոշոր լինի այսօրվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չէ, որ պիտի որոշե, վճռե հայության ապագայի վիճակը»:

Կամավորական շարժման նկատմամբ թերահավատություն, բայցև նրա հերոսական ոգու արժանվույն գնահատում, միաժամանակ ազնիվ մտահոգություն ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Կռվող կամավորների հերոսական կամքի գնահատումը կա 1915 թ. գրված մի հոդվածում ևս. «Ինչ ոգևորությամբ որ մեր ուսանողների մեծ մասը դիմեց կռվի դաշտը, նույնպես պետք է ոգևորվի իր մտավոր-կուլտուրական զինվորությամբ հայ ուսանողությունը, պիտի ներշնչվի նույն հզոր կամքով ու սիրով, և դա կլինի նրա լավագույն նվերը մեր հայրենիքին, որ այնքան կարոտ է ազնիվ և կարող ուժերի: Այդպես պետք է ըմբռնե իր միսիան կռվի դաշտից հեռու հայ երիտասարդ մտավորականությունը»:

Տերյանագիտության մեջ սխալ դիտարկումներ են ամրագրվել նաև Տերյանը և Հայկական հարցը խնդրի շուրջ: Անգամ արժանահիշատակ Հ. Թամրազյանն է թյուր տեսակետ հայտնել՝ գրելով. «Խոր կսկիծով նա ասում է ավելին՝ ես չեմ հավատում թուրքահայ հարցի ապագային»: Գրականագետի սույն դիտարկումը թերևս հունի մեջ դնի Տերյանն ինքը, որի՝ սպիտակ թղթին հանձնված տողերից մեկ դար անց էլ զգացվում է բանաստեղծի հոգեկան ծայրահեղ սրվածությունը դեպի ճակատագրական Հայկական հարցը. «Միթե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տատանվելու. պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ, պետք է տենչալ սրտի բոլոր զորությամբ և մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ արյունլվիկ հարցը»:

Ազգային ճակատագրում կյանքի և մահվան խնդիր դարձած Հայկական հարցի վերապրումը Տերյանի կողմից, անթիվ հույսերի, ցնորքների, մտահոգությունների, կանխազգացումների և դատողությունների բևեռացումը նրա հոգեվիճակում հնարավորինս պատկերացնելու համար վերստին դիմենք Տերյանի՝ հակասական գնահատականների և բուռն վեճերի արժանացած «Հոգևոր Հայաստան» հոդվածին. «Արդեն թվում է, որ եթե անգամ այդ Հայաստան կոչված դժբախտ երկրում ոչ մի հայ չմնա, մենք դարձյալ պիտի այրվենք նույն իղձերով, նույն ցավագին, մեզ համար մի տեսակ կրոնական գունավորում ստացած այս խնդրով: Այդ հարցի այս կամ այն լուծման ծանր տարակուսանքներով և ոսկե երազներով սերունդներ են կրթվել, այդ հարցի շուրջը պտտվող գրականությամբ սնվել են սերունդներ: Հայության համար մի ցավոտ ցնորք է դարձել այդ «Հայաստանը», մի ավետյաց երկիր, դյութական մի անուն: Բնական է դրա համար, որ մենք անկարող ենք այդ խնդրի մասին սառնասիրտ խոսել, հանգիստ մտածել: Ավելին կասեմ. մեզ մի տեսակ սրբապղծություն է թվում, երբ մարդիկ մեր ազգի՝ տարիներով ու տասնյակ տարիներով փայփայած գաղափարին մոտենում են սառն մտքով, անտարբեր գիտնականի ոճով.... Թվում է, թե ոչ դիվանագիտական խճուճ հարաբերությունները, ոչ տնտեսական-հասարակական անսասան օրենքները, ոչ բնական անկարելիությունը չեն կարող դեմ կանգնել այդ միահոգի, միահամուռ ու բորբոքուն տենչանքին, այդ տարերային հեղեղի բնույթ կրող, ճակատագրական դրոշմով կնքված ընթացքին: Այդ հոսանքի լոզունգը բացարձակ ու վճռական է, նրա դրոշակի վրա գրված է՝ «Դեպի Հայաստան»:

Դառնալով Հ. Թամրազյանի վերոհիշյալ դիտարկմանը՝ նշենք, որ հիմքը թերևս Տերյանի՝ 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսում ընթերցած «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունն էր, որի ընթացքում ևս մի անգամ անդրադառնալով հայության ցավոտ խնդրին՝ Տերյանն ասում է. «Ես տաճկահայկական հարցի լուծմանը Թուրքիայի սահմաններում չեմ հավատում: Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների.... Տաճկաստանի վերածնությանը ես չեմ հավատում: Իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի և բաղձանքները նրա բաղձանքների հետ՝ ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»:

Տերյանի ազգային դիմանկարի վերագնահատումը պահանջում է անդրադառնալ նաև Տերյանը և բոլշևիկյան հեղափոխությունը հարցադրմանը: Հարցի հստակ մեկնաբանությունը կա. «Տերյանը,— իրավացիորեն նկատում է Հ. Թամրազյանը,— որոշ հակասություններով ընդունում և ըմբռնում է հեղափոխության մի շարք կողմեր, համակրանքով մոտենում այդ մեծ շարժմանը՝ նկատի ունենալով հատկապես ազգերի ազատագրության և անհատի բարոյական վերածնության խնդիրները»: Ըստ պատմաբան Դավիթ Անանունի՝ 1916 թ. Տերյանն իրեն ուղղված նամակում գրել է. «Ռուսաստանում ես չեմ կարող անդամ լինել որևէ սոցիալիստական կուսակցության»: Այնուհանդերձ՝ ազգային-քաղաքական հեռահար նպատակներով Տերյանն անդամակցում է բոլշևիկյան կուսակցությանը՝ ի սկզբանե հաստատագրելով գաղափարական որոշակի վերապահումներ. «Ես, ճիշտ է, համակրել եմ միշտ բանվորական գործին և եղած կուսակցությանց մեջ քաղաքական և տնտեսական ծրագրերից ամենից շատ համակիր եմ եղել ս-դ-ի ծրագրին, բայց մարքսիստ չեմ բնավ աշխարհայացքի մտքով»: Առհասարակ, Տերյանի ինչպես ազգային-քաղաքական գործունեությունը, այնպես էլ պոեզիան գնահատելիս ելակետ պետք է ունենալ երկու թվանիշ՝ Տերյանը մինչև 1918-ը և Տերյանը 1918-ից հետո:



Ազգային նպատակներով գերմտահոգ՝ 1917 թ. Տերյանը, թեև հիվանդ և հյուծված, հոգեկան ու ֆիզիկական աներևակայելի լարումով, ինչպես վկայում են ժամանակակիցները, «ամբողջ օրը մեկ ժողովից մյուսն էր վազում, տեղեկություններ հավաքում և ծրագրեր կազմում ապագա Հայաստանի համար»: Անտեսելով խորացող հիվանդությունն ու մահվան վտանգը՝ Տերյանը տենդագին լարումով մաքառում է Հայկական հարցի համար: 1917 թ. նոյեմբերին գրում է «Թուրքահայաստանի մասին» զեկուցագիրը, նախապատրաստվում Բրեստ-Լիտովսկի բանակցություններին: Ո՞րն էր Տերյանի պահանջատիրությունը ժողովրդական կոմիսարների կառավարությունից. փաստացի և վճռականորեն պաշտպանել արևմտահայերի լիակատար ազգային ինքնորոշման ձգտումը և օժանդակել այն երաշխիքների ստեղծմանը, որոնք իրական հնարավորություն կտային ինքնորոշմանը: Որպես նախնական երաշխիք՝ զեկուցագրում Տերյանն ընդգծում էր, որ ռուսական զորքերը չպետք է դուրս բերվեն պատերազմի իրավունքով իրենց կողմից գրավված Հայաստանից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև նոր կարգ չհաստատվի:

1917 թ. նոյեմբեր—դեկտեմբերին «Ընկերներից մեկին»՝ Մակինցյանին, Տերյանը գրում է. «Ստալինն ասաց՝ մենք իսկույն ևեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան, և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի.... Այսօր այդ առթիվ զրույց ունեցա ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչու անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների վերադարձով և այլ գարանտիաներով: Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ հայերը պահանջ են այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից, և նրանք ստիպված չլինեն ռուսական օրիենտացիա ընդունել: Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասեր»:

Տերյանի զեկուցագիրը քննվում և հիմք է ընդունվում նույն թվականի դեկտեմբերին: Այն ազդարարում էր. «Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»: Սակայն, ի հեճուկս Տերյանի զեկուցագրի, որպես երաշխիք առանձնանշվում էր նաև ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտահայաստանից:

➥ էջ 6, 8

Ներսես Աշտարակեցին՝ ազգային-ազատագրական շարժման առաջնորդ

➥ էջ 3

Թուրքերի դեմ նոր պատերազմի առջև կանգնած Ռուսաստանին անհրաժեշտ էր Հովսեփ արք. Արղությանի նման կտրիճ առաջնորդ, որը կկարողանար ռուսական ազդեցությունը սփռել՝ Բալկանյան թերակղզում ապրող հայերի աջակցությունն ստանալու համար. «Այդ ժամանակուա հայ հոգևորականութեան մէջ այդպիսի դեր կատարելու համար ամենից ընտրեալը մէկն էր՝ Ներսէս արքեպիսկոպոսը» (Ա. Երիցեան, նշվ. աշխ., մաս Ա, էջ 359):

Ազնվական ծագմամբ այս նվիրյալ հոգևորականը, չնայած մշտապես տարված է եղել ազատագրման պայքարի նախապատրաստմամբ և դարասկզբին ծավալվող ռուս-պարսկական պատերազմներով, միշտ մնացել է իբրև հայ եկեղեցականի օրինակելի տիպար և կրոնական բարձր գիտակցության կրող: Չնայած եկեղեցական կյանքում իր ձեռքբերումներին և պատիվ բերող փառահեղ հաջողություններին՝ նա իր նամակների վերջում ստորագրում էր՝ «Նուաստ Ներսէս աբեղայ»:

Տակավին սարկավագ եղած ժամանակվանից բարեշնորհ Թորոսը, որ հետո ստացավ քահանայական Ներսես անունը, մեծ դեր է ունեցել եկեղեցական կյանքում առկա խնդիրների կարգավորման գործում՝ աչքի ընկնելով իր ուրույն և անհողդողդ կեցվածքով: Դավիթ-Դանիելյան վեճերի ժամանակ, լինելով Դանիելյան կուսակցության գլխավոր ղեկավարը, 1808 թ. Դանիել Ա Սուրմառեցի Կաթողիկոսի կողմից արժանացել է եպիսկոպոսական ձեռնադրության և շատ չանցած՝ արքության պատվի: Իսկ երբ ձևավորվում է Սինոդը, որպես ժողովական անդամ և կաթողիկոսի խորհրդակից՝ նա իր ամբողջ կարողությունները ներդնում է նորաստեղծ կառույցը զարգացնելու և Ռուսատանի ու Վիրահայոց թեմերը նրան ենթարկեցնելու գործում, ինչպես նաև նպաստում է Եփրեմ Ա Զորագեղցի Կաթողիկոսի ընտրությանը՝ անձամբ արքայորդի Աբբաս-Միրզայից ստանալով պետական վավերացումը «յանուն Եփրեմի»: Այդ շրջանում վարելով Մայր Աթոռի եկեղեցական գրագրությունը որպես դիվանապետ՝ կապեր է հաստատում Ռուսաստանի, Վրաստանի, Պարսկաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի արքունական ներկայացուցիչների հետ՝ իր բոլորանվեր գործունեությամբ փորձելով հուսալի գործընկերներ գտնել ազգային հարցերի կարգավորման գործում:

Ալեքսանդր Գրիգորյան, Էրիվանի բերդի գրավումը

Աշտարակեցու համազգային հեղինակության վկայությունն է 1812 թ. Մայր Աթոռ այցելած՝ Հնդկաստանի և Պարսկաստանի անգլիկան հոգևորական Հենրի Մարտինի հետևյալ գրառումը. «Այս մենաստանը (Ս. Էջմիածինը) կամ աւելի լավ է ասել՝ հայոց ամբողջ ազգը Ներսէսի իշխանութեան ներքոյ են....» (Մ. Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի..., Մոսկուա, 1876, էջ 306):

➥ էջ 7

Տյառնընդառաջ. Քրիստոսին ընդառաջ գնալու և լույսը գտնելու խորհուրդը

Ամեն տարի՝ փետրվարի 14-ին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Տյառնընդառաջը՝ 40-օրյա Հիսուսի՝ տաճարին ընծայման տոնը:

Քրիստոսի՝ տաճարին ընծայման դրվագը Նոր Կտակարանում հանդիպում է Ղուկասի Ավետարանի 2:22–40 հատվածում: Տյառնընդառաջի հիմքում ընկած է Մարիամ Աստվածածնի և Հովսեփի՝ հրեական երկու օրենքների կատարումը: Ըստ հրեական օրենքի՝ եթե կինն արու զավակ էր ունենում, յոթ օր անմաքուր էր համարվում, որից հետո մանուկի թլփատումն էր կատարվում: Թլփատումից հետո ևս 33 օր կինը պետք է սրբագործման շրջան անցներ և սրբարան չմտներ: Մաքրության օրերի լրումից հետո (ընդհանուր՝ որդու ծնունդից 40 օր անց) նա պետք է մեկ տարեկան գառ բերեր տաճար՝ զոհաբերության համար, սակայն ովքեր ի վիճակի չէին գառ զոհաբերելու, կարող էին երկու տատրակ կամ աղավնու երկու ձագ բերել՝ ի քավություն ծննդկանի (Ղևտ. 12): Ղուկասի Ավետարանում մենք հենց երկրորդ դեպքն ենք տեսնում. քանի որ Աստվածամայրը և Հովսեփը հարուստ չէին, պարտավորված չէին գառ զոհաբերելու և զոհաբերում են մի զույգ տատրակ կամ աղավնու ձագ: Երկրորդ օրենքն այն էր, որ եթե զավակն առաջնեկ էր, ապա, ըստ Ելից 13:12 հատվածի, ծննդկանին պետք է բերեին տաճար՝ ընծայման կարգ կատարելու: Այստեղից էլ տոնի բուն անվանումը՝ «Հիսուսի ընծայումը տաճարին»:

Ավետարանում երկու անձանց հիշատակումն այս օրենքի կատարման դրվագը դարձնում է Քրիստոսի աստվածային էության վկայման կարևորագույն մաս. այդ անձինք են Սիմեոն ծերունին և Աննա մարգարեուհին: Սիմեոն ծերունին, որն Աստծուց հրաման էր ստացել՝ չմեռնել մինչև Տիրոջ Օծյալին չտեսնելը, այդ օրը գալիս է Երուսաղեմի տաճար և մարգարեական շնորհով վկայում, որ հենց մանուկ Հիսուսն է Իսրայելի խոստացված Փրկիչը: Նույնպես և Աննա մարգարեուհին, որ մոտ 84 տարեկան այրի էր և չէր հեռանում տաճարից՝ աղոթքով ու ծոմապահությամբ անցկացնելով իր կյանքը, օրհնում է Տիրոջը և մարդկանց հետ խոսում Մանկան փրկչական առաքելության մասին:



Թորոս Ռոսլին, Տյառնընդառաջ, 1267—1268 թթ., Մալաթիայի Ավետարան, Երևան, ձեռ. 10675, էջ 167ա

«Տյառնընդառաջ» անունը մեր եկեղեցին վերցրել է Սիմեոն Ծերունու՝ Տիրոջն ընդառաջ գնալու դրվագից: Տոնը կարծես նույն խորհրդով մեզ բոլորիս կոչ է անում կատարել հավատի առաջնային քայլը՝ Քրիստոսին ընդառաջ գնալ՝ կյանքում գտնելու այն «լույսը, որը կլինի հայտնություն հեթանոսների համար» (Ղուկ. 2:32, հմմտ. Ես. 49:6):

Անհրաժեշտ է նշել, որ Տյառնընդառաջն այն տոներից է, որի տոնախմբությունը հայկական միջավայրում զգալիորեն տարբերվում է այլ եկեղեցիների և ժողովուրդների տոնակատարություններից: Ավանդական խարույկ վառելու սովորույթը միայն մեր եկեղեցում է առկա: Արևմուտքում տոնն առավել հայտնի է «Candlemas» (candle – մոմ) անվամբ, որը կապված է տոնի ժամանակ մոմերի օրհնության կարգ կատարելու հետ: Մոմերը խորհուրդն են վերոնշյալ լույսի, որ Հիսուս Քրիստոս է: Ինչ վերաբերում է հայկական ծիսակատարությանը, ապա բոլորիս քաջածանոթ են տոնի նախատոնակին վառվող ավանդական խարույկը, տոնական աղանդերը, նորապսակների օրհնության կարգը և այլն:

Ժամանակի ընթացքում խարույկ վառելու ավանդույթը տարատեսակ քննադատությունների են ենթարկել՝ դրան վերագրելով հեթանոսական խորհուրդ: Այստեղ կարևոր է նշել, որ կրակի խորհուրդը քրիստոնեության մեջ իր վերահմաստավորումն է ստացել լույսի խորհրդով: Անհեթեթ է կարծելը, թե Հայ Եկեղեցին որևէ կերպ կարող է կրակին վերագրել պաշտամունքային տարրեր: Այստեղ շատ կարևոր է, թե ինչ ուղեկցող սովորույթներ են տեղ գտնում խարույկավառության ավանդույթի կողքին: Եթե կրակով գուշակություններ ենք անում կամ, օրինակ, կրակի վրայով ցատկելիս ցանկանում ենք մեր անհաջողությունները և հիվանդությունները վերացնել, ապա մենք սխալ ենք մեկնաբանում կրակի լուսատու խորհուրդը: Եկեղեցին անգամ մեզ արգելում է կրակի շուրջ պտտվելը՝ որպես ծիսական պաշտամունքային գործողություն: Ինչ վերաբերում է կրակի հետ կապված մնացյալ խաղերին ու տարածված սովորույթներին, ապա դրանք ընդամենը ժողովրդական գեղեցիկ ավանդույթի մաս են, և դրանց կրոնական, առավել ևս հավատի համար էական նշանակություն չպետք է հաղորդել:

Իսկ այն, ինչին պետք է կարևորություն հաղորդել, տոնի օրը կատարվող նորապսակների օրհնության կարգն է, որը հաստատել է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Քանի որ ժողովուրդը Տյառնընդառաջը միշտ առնչակցել է նորապսակների հետ, Եկեղեցին այդ ժողովրդական ավանդույթին քրիստոնեական շունչ ու էություն է հաղորդել, որը հրաշալի առիթ է նորապսակների համար՝ աղոթքով ու օրհնությամբ զորացնելու իրենց հարաբերությունները:

Տյառնընդառաջն առհասարակ մաքրագործման, հավատի վերանորոգության խորհուրդն ունի: Այդ զգացումը համընկնում է նաև տոնի՝ տարվա մեջ գտնվելու տեղի հետ: Փետրվարի 14-ը տարվա այն ժամանակն է, երբ ձմեռն սկսում է «զիջել իր դիրքերը» գարնանը, սովորաբար սառնամանիքներն անցյալում մնացած են լինում, և մարդիկ, ինչպես և բնությունը, սպասում են արևաշողի հովտում ապրող բնակչության մեծ մասի համար: Այն շատ հաճախ օգտագործվել է որպես վճարման միջոց՝ որևէ աշխատանքի դիմաց, կամ էլ միջոց՝ հարկեր վճարելու համար: Եգիպտոսում ձկնորսները՝ որպես այդպիսին, ներկայացրել են հասարակության ցածր խավը: Նրանք ստիպված էին իրենց որսի մեծ մասը հանձնել տվյալ տարածքի փաստացի տիրոջը: Թեև վաղ շրջանի՝ հատկապես Հին թագավորության ժամանակահատվածի (Ք. ա. 2649–2150 թթ.) նկարազարդումները ներկայացնում են ձկնորսներին աղքատ և տարեց տղամարդկանց կերպարանքով, այնուամենայնիվ պահպանված վկայությունները ենթադրել են տալիս, որ ձկնորսությունը ժողովրդական ավելի լայն շրջանակներ է ընդգրկել՝ այդ թվում ազնվականությանն ու հասարակ գյուղացիությանը, և ծառայել տարբեր նպատակների՝ սննդի սպառում, կրոնական ծեսեր, սպորտ:

Լուիս դե Վարգաս, Հիսուս Քրիստոսի ընծայումը տաճարին, 1560 թ.

Լույս վերազարթոնքի: Տյառնընդառաջի նախատոնակին Եկեղեցին կատարում է նաև Անդաստանի կարգ, որի խորհուրդը հենց բարեբեր տարվա սկիզբն ու վերամեկնարկումն ազդարարելն է՝ աստվածային շնորհների և օրհնության ներքո:

Անկախ տոնակատարություններից, սովորույթներից, ավանդույթներից՝ բոլորիս համար կարևոր է չմոռանալ տոնի բուն էությունը. այն է՝ Քրիստոսի աստվածային հայտնությանն ընդառաջ գնալը, ինչպես որ Սիմեոն ծերունին է ընդառաջ գնում: Այս տոնը աստվածային խոստման և այդ խոստումին հավատարմության մասին է, «խավարի մեջ գտնվող» հեթանոսներին ուղարկված լույսի և այդ լույսի փրկարար զորության մասին: Իսկ մնացյալը, ինչպես արդեն նշեցինք, ժողովրդական բարի սովորույթներ են՝ առանց մոգական ու հրաշագործ ազդեցությունների:

Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ
Էդվարդ սրկ. ՔԵՇԻՇՅԱՆ

Ձկան և ձկնորսության խորհրդաբանությունը Հին Մերձավոր Արևելքում

Ձկան թե սննդային և թե տնտեսական մեծ նշանակությունը Հին Մերձավոր Արևելքում հայտնի է եղել գրեթե բոլոր ժամանակներում: Ձկնորսությունն այստեղ ապահովում էր և՛ մեծ քանակությամբ սնունդ, և՛ բավականին մեծ շահույթ, ինչն էլ իր հերթին վկայում է դրա կարևոր ու տարածված զբաղմունք լինելու մասին, ավելին՝ ձուկը և ձկնորսությունը կարևոր դեր են ունեցել նաև Հին Մերձավոր Արևելքի խորհրդանշական աշխարհում:

Եգիպտոսի ձկնորսական աշխարհը: Եգիպտական ձկնորսության մասին պահպանված փաստաթղթային տեղեկությունները բավական սակավ են, և եթե չլինեին ձկների կամ ձկնորսական դրվագների տարատեսակ նկարազարդումները, դժվար թե հնարավոր լիներ ամբողջական պատկերացում կազմել եգիպտական ձկնորսության և այդ մշակույթում դրա տեղի ու դերի մասին: Ընդհանուր պատկերը լրացնելու են գալիս պատմական աղբյուրները՝ այդ թվում Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից», Կլավդիոս Ելիանոսի «Կենդանիների բնության մասին» («De Natura Animalium») աշխատությունները:

Ձկան խորհրդապատկերներ

«ΙΧΘΥΣ»՝ հունարեն «ձուկ» բառը ծածկագիր է՝ «Ιησους Χριστος Θεου Υιος Σωτηρ», և նշանակում է «Հիսուս Քրիստոս՝ Աստծու Որդի, Փրկիչ»:

Երևում է, որ ձուկը եղել է ամենակարևոր և էժան կերակուրը Նեղոսի հովտում ապրող բնակչության մեծ մասի համար: Այն շատ հաճախ օգտագործվել է որպես վճարման միջոց՝ որևէ աշխատանքի դիմաց, կամ էլ միջոց՝ հարկեր վճարելու համար: Եգիպտոսում ձկնորսները՝ որպես այդպիսին, ներկայացրել են հասարակության ցածր խավը: Նրանք ստիպված էին իրենց որսի մեծ մասը հանձնել տվյալ տարածքի փաստացի տիրոջը: Թեև վաղ շրջանի՝ հատկապես Հին թագավորության ժամանակահատվածի (Ք. ա. 2649–2150 թթ.) նկարազարդումները ներկայացնում են ձկնորսներին աղքատ և տարեց տղամարդկանց կերպարանքով, այնուամենայնիվ պահպանված վկայությունները ենթադրել են տալիս, որ ձկնորսությունը ժողովրդական ավելի լայն շրջանակներ է ընդգրկել՝ այդ թվում ազնվականությանն ու հասարակ գյուղացիությանը, և ծառայել տարբեր նպատակների՝ սննդի սպառում, կրոնական ծեսեր, սպորտ:

Ձուկը՝ իբրև ծիսական զոհաբերություն: Չնայած պահպանվել են բազմաթիվ վկայություններ թագավորների կողմից տարբեր աստվածություններին զոհաբերված ձկների և նույնիսկ դրանց թվաքանակի մասին, այդուհանդերձ՝ պետք է արձանագրել շատ կարևոր փաստ. թագավորական ու տաճարական անձնակազմը հիմնականում զերծ էր մնում ձուկ ուտելուց: Պլուտարքոսն իր «Իզիսի և Օզիրիսի մասին» («De Iside et Osiride») աշխատության մեջ գրում է. *«Ինչ վերաբերում է ծովային ձկներին, ապա եգիպտացիները ոչ բոլոր ձկնատեսակներից է, որ խուսափում էին, օրինակ՝ Օկսիրինխի բնակիչները մեծ հարգանք ունեին համանուն օկսիրինխ ձկնատեսակի նկատմամբ և վախենում էին, որ այն կարթը, որով այդ ձկնատեսակը որսվում է, կարող է լինել անմաքուր»*: Ստացված փաստերի ու տեղեկությունների համադրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ այն տեղերում, ուր քահանաները ձեռնպահ էին մնում ձուկ ուտելուց, ժողովուրդն էր այն կիրառում, իսկ այն տարածքներում, որտեղ ժողովուրդը չէր ուտում, օգտագործում էին քահանաները: Սա կարող է խոսել այն մասին, որ քահանաներն այդ կերպ փորձել են ցույց տալ իրենց կրոնական առավելությունը հասարակ բնակչության նկատմամբ:

Թաղման ծիսակարգում ձկները խորհրդանշում էին փոխադրումը մահից դեպի նոր կյանք, օրինակ՝ շատ տեսարաններ, որտեղ պատկերված է թիլապիա ձկնատեսակի որսը, պարունակում են վերածննդի հստակ ուղերձ: Թիլապիան և Նեղոսի կատվաձուկը համարվում էին արեգակնային աստվածության ուղեկից պաշտպանները դեպի տիեզերք նրա ամենօրյա ճանապարհորդության ընթացքում և հանդես էին գալիս որպես հարության երաշխավորներ մահացածների համար՝ պաշտպանելով նրանց ստորգետնյա աշխարհի արհավիրքներից: ➥ էջ 8

Վահան Տերյանի ազգային գործունեությունը և մահը

➥ էջ 3, 4

Այդուհանդերձ՝ կանխագծվում էր Արևմտահայաստանի ազատագրման ուղին. Տերյանը մեծ սպասումների մեջ էր, սակայն 1918 թ. մարտի 3-ին Բրեստում Լենին–Քեմալ դաշինքով բոլշևիկյան կառավարությունը Թուրքիային է նվիրաբերում ոչ միայն Արևմտահայաստանը, այլև Կարսի, Արդահանի նահանգները. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրսբերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային: Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից»: Տերյանը, որ Ազգագործժողկոմատին կից Հայկական գործերի ժողովրդական կոմիսարիատի տեղակալն էր, որպես խորհրդական լիազորված էր Ռուսաստանի պատվիրակության կազմում: Կասկածից վեր է, որ հենց այդ օրերին է գրվել նրա «Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին» բանաստեղծությունը: Պատահական չէ, որ Կարսի ողբերգական անկմանը նվիրված իր վեպում՝ «Երկիր Նաիրի»-ում, Չարենցը, մի առիթով հիշելով իր «սիրելի, վաղաժամ մահացած պոետին», մեջբերում է նրա երկտողը. «Եգիպտական բուրգերը փոշի կդառնան, // Արևի պես, երկիր իմ, կվառվես վառման....»:

1918-ին, Բրեստ-Լիտովսկի բանակցություններով գերլարված, Տերյանը հնարավորություն չունեցավ մեկնելու Ստավրոպոլ՝ իր մահամերձ զավակի կողքին լինելու, սփոփելու կնոջը, որ հողին էր հանձնում իրենց երկրորդ զավակին... Եվ դա ոչ թե հայրական կամ ամուսնական հոգատարության բաց էր, այլ ահավոր զոհաբերում՝ ազգային պարտավորության խոր գիտակցումով:

Բրեստ-Լիտովսկից հետո շրջադարձ է կատարվում Տերյանի քաղաքական հայացքներում: Ազգային ու անձնական անվերադարձ կորուստների, չսրբագրվելիք սխալների մղձավանջից ցնցված՝ բանաստեղծը սփոփանքի ու ինքնարդարացման նամակ է հղում կնոջը. «Մի բան կասեմ միայն. հավատա, որ այս երկու ամսվա ընթացքում ես ապրել եմ այնքան վիշտ ու թախիծ, որքան չեմ ապրել ամբողջ կյանքիս ընթացքում: Եվ եթե մտածես այդ մասին և աշխատես հասկանալ ինձ, գուցե և ներես»: Տերյանի այս և մյուս նամակները մնացին անպատասխան: Սուսաննան չարձագանքեց դրանց, մեկնեց անհայտ ուղղությամբ՝ անհանգստության տագնապ մնալով Տերյանի համար մինչև մահ:

1918 թ. ամռանը Տերյանը՝ ջլատված, գունատ, ջղային, շրջում էր արդեն Հյուսիսային Կովկասում՝ հայ գաղթականության օգնության գործը կազմակերպելով: «1918 թ. ամռան ու աշնան ամիսներին ես ստիպված եղա թափառել Աստրախանի շրջանում և Հյուսիսային Կովկասում,– հիշում է Դ. Անանունը:– Այդ ժամանակ էլ նորից հանդիպեցի Վ. Տերյանին և հնարավորություն ունեցա թափանցել նրա բոլշևիզմի խորքը ու հավաստիանալ, որ նոր ուսմունքի մեջ էլ բանաստեղծը մնացել էր իր ժողովրդին հարազատ և անձնվեր»: Սույն՝ «Հանդիպումներ Վ. Տերյանի հետ» հոդվածը (1920) կանխամտածված շրջանցել է խորհրդահայ տերյանագիտությունը, որովհետև բացառիկ էր Տերյանի ազգային դիմանկարի վերագնահատմամբ և հակասող՝ բոլշևիկ բանաստեղծի կերպարին: «Վ. Տերյանը խոշոր գումար էր բերել հայ փախստականների համար,– շարունակում է Դ. Անանունը:– Նրան իբրև քարտուղար ուղեկցում էր աստրախանցի Յ. Վ-նը՝ օտար անվան տակ ծածկված: Բանն այն է, որ Տերյանի Աստրախան եղած ժամանակ տեղի է ունենում միօրյա հեղաշրջում: Յ. Վ-նը հռչակվում է քաղաքի կոմենդանտ: Ձերբակալվում է բոլշևիկյան իշխանությունը, իսկ զինվորական կոմիսարը՝ սպանվում: Հակաբոլշևիկյան ուժերը որոնում են Վ. Տերյանին, բայց Յ. Վ-նը՝ իբրև հնօրյա ծանոթ, նրան պատսպարում է իր տանը: Մի օրից հետո գալիս են բոլշևիկները և նորից գրավում Աստրախանը: Այժմ իր հերթին Տերյանն է պատսպարում «հակահեղափոխական» Յ. Վ-նին, տալիս նրան ուրիշ անուն և քարտուղար կարգում իր մոտ.... Վ. Տերյանը իր հետ բերած դրամի մի աննշան մասը միայն տվավ Պյատիգորսկի Խորհրդային իշխանություններին: Նա տեսավ այդ իշխանությունների արարքներն ու բարոյականը և սկսեց անվստահությամբ նայել նրանց վրա.... Ինձ՝ «հակահեղափոխականիս», Հյուսիսային Կովկասում չգնդակահարեցին Ներսիսյան դպրոցից դուրս եկած «հեղափոխական» հայ բոլշևիկները, բայց ուրիշ մտավորականների հետ միասին ձերբակալեցին և բանտ առաջնորդեցին.... Վահանը կարմրում էր իր կուսակցական ընկերների արարքների համար: Նա երաշխավոր կանգնեց ինձ ու մի երկու ուրիշ ձերբակալվածների համար և մեզ ազատեց Էսենտուկիի բանտից: Մյուսների համար համառորեն պայքարեց և նրանց ազատությունը պահանջեց.... 1918 թ. Բեռլինի լրացուցիչ պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը Գերմանիայի առաջ ճանաչում էր Վրաստանի անկախությունը: Այդ լուրը ջղայնացրել էր բանաստեղծին: Նա շտապում էր վերադառնալ Մոսկվա, որպեսզի դրդե բոլշևիկներին ճանաչելու նաև Հայաստանի անկախությունը»:



Պ. Մակինցյանը հիշում է. «Երբ նա վերադարձավ Հյուսիսային Կովկասից, այդ մոտավորապես 1919 թ. փետրվարին էր, նա բոլորովին ջարդված էր– թոքախտն արդեն անցել էր կոկորդին»: Ս. Օտարյանը հիշում է. «Պյատիգորսկում բոլորովին անսպասելի տեսա Վահանին՝ հյուծված, ծայրաստիճան հոգնած, տաքությունը վրան: Հազիվ շնչում էր»:

Երեք տարի՝ 1917–1919 թթ., Տերյանն ամբողջովին խրված էր պետական գործերի մեջ՝ քայքայելով առողջությունը. խորապես տուժել էր նաև ստեղծագործական գրիչը: 1919 թ. ամռանը բանաստեղծը մի կարճ ժամանակ մտնում է Մոսկվայի Սոկոլնիկի արվարձանի Չետվերիկովի առողջարան, սակայն սրտնեղվելով պայմաններից՝ հեռանում է: Բոլշևիկյան կառավարությունը ոչինչ չարեց Տերյանի առողջության վերականգնման համար, այդ օրերին բանաստեղծին ձեռք է մեկնում բժիշկ Զավրիևը (Զավրյան)՝ դաշնակցական կառավարության անդամներից մեկը՝ առաջարկելով բանաստեղծին ամեն տեսակի աջակցություն Շվեյցարիայում բուժվելու համար: Ըստ Անահիտ Շահիջանյանի՝ Տերյանը հրաժարվում է:

Տերյանի և Դաշնակցության՝ 1917–1919 թթ. համագործակցության մասին կան պատմական մի շարք ուղղակի և անուղղակի փաստեր: Բոլշևիկ–դաշնակցական այդ համագործակցության վերջնական նպատակը հայկական պետականությունն Արարատի վրա հաստատելն էր, հայ ժողովրդի համար կործանարար Լենին–Քեմալ դաշինքի կանխումը, ինչը, սակայն, չիրականացավ:

1919 թ. մայիսին արդեն Տերյանը բոլշևիկյան իր ծուռ խաչը կրելու ճանապարհի վերջին հանգրվանին ինքնաքննադատաբար խոստովանում էր, որ ինքը 1905 թ. լի էր «նացիոնալիստական ու մանրբուրժուական նախապաշարումներով, ենթակա նացիոնալիզմի թունալի հմայքին»: Ինչո՞ւ էր արդարանում Տերյանը և ինչի՞ց. ազգայնական մեղադրանքների՞ց, երբ արդեն Կոմկուսի և Համառուսական կենտգործկոմի անդամ էր, Հայկական գործերի ժողկոմի տեղակալ: 1937-ի նախասկիզբը չէ՞ սա, և անմիջական կապ չկա՞ արդյոք Տերյանի այս խոստովանության և նրա պետական գործունեության միջև:

1919 թ. հոկտեմբերին Արտգործժողկոմի «կարևոր և շտապ» հանձնարարություններով Տերյանը գործուղվում է Տաշքենդ: Հիվանդ, բոլորովին հյուծված, բուժման և հատուկ խնամքի խիստ կարիք ունեցող բանաստեղծին պետական ի՞նչ կարևոր հանձնարարություններով էին գործուղում Թուրքեստան: Հետագայում Արևելք՝ Պարսկաստան և Թուրքիա, ի՞նչ առաքելությամբ պիտի գնար, դարձյալ անհայտ է: Հակասական, բայց հիմնավոր ենթադրությունների ու կարծիքների տեղիք տված այդ ուղևորության շուրջ Պ. Մակինցյանը հայտնում է, որ Տերյանը Պարսկաստանի վրայով մտադիր էր անցնել կամ Պոլիս, կամ Անդրկովկաս. «Շատ էր հիշում իր հայրենի Ջավախքը և մանավանդ կարոտով փափագում էր լինել Հայաստանում», որտեղ շատ բան էր փոխվել Տերյանի վերջին այցից հետո: Պետականությունից հետո ծայր էր առել նաև գիտական-մշակութային լայն գործունեություն, Երևանը դառնում էր աշխարհացրիվ հայ հոգևոր ուժի կենտրոն: Ս. Սուքիասյանը գտնում է. «Ինչ վերաբերում է Թուրքեստանից դեպի Պարսկաստան, այնտեղից էլ Թուրքիա անցնելու հետագա ծրագրերին, ապա դրանք հազիվ թե իրական հիմք ունենային»: Այդ չարաբաստիկ ուղևորության մասին պահպանվել է միայն խիստ վերացական մի վավերաթուղթ. «Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը սույնով հաստատում է, որ սույնը ներկայացնող՝ Համառուսական ԿԳԿ անդամ Վահան Սուքիասի Տերյանը ուղևորվում է Արտգործժողկոմատի կարևոր և շտապ հանձնարարություններով Տաշքենդ քաղաքը՝ Սամարայի և Օրենբուրգի վրայով: Բոլոր ռազմական, քաղաքացիական և երկաթուղային իշխանություններին առաջարկվում է ցույց տալ ընկ. Տերյանին ամենալայն օժանդակություն նրա ուղևորության ճանապարհին»:

Մի բան ակնհայտ է. Տերյանն աքսորվում էր մահվան ափեր. հեռավոր, դավադիր ուղիներ ձգվող դանդաղընթաց, ցուրտ, ծխաշատ գնացքն արդեն գուժում էր պոետի մոտալուտ մահը: Ի՞նչ խոհեր էին ուղեկցում բանաստեղծին: Սամարայից Ալեքսանդր Մյասնիկյանին հղած վերջին նամակում Տերյանը գրում է. «Օրինյալ լինես, Հոկտեմբեր, որ այսքան ոգևորություն ես ներշնչում անգամ ինձ նման անդամալույծներին», մինչդեռ ներքին զգացողությունն այլ բան էր հուշում: Մարգարեանալով՝ գրել էր.

Նորից իմ ճամփան գնում է հեռուն,
հեռուն է տանում
Եվ օրորում է թախծալի երգով
գնացքն այս անկանգ,
Նորից ես անտուն, նորից հեռավոր,
նորից անանուն,
Եվ իմ հոգու մեջ և շուրջս նորից
աղետ ու վտանգ...
Բացվում են իմ դեմ անծիր
ծավալվող երկրներն այս նոր,
Եվ քանի գնում, այնքան երազ ես
թվում, այնքան վառ,
Եվ քանի գնում, այնքան բաղձալի,
այնքան լուսավոր
Եվ դյութական է հնչում քո ձայնը,
հայրենիք թշվառ...

Բանաստեղծության վերջին քառատողը հնչում է որպես հրաժեշտի խոսք և վերջին մաղթանք իր ժողովրդին.

Որքան ցավել է իմ սիրտը, այնքան
թող զվարթ լինի քո սիրտը լուսե,
Որքան դառնություն տվել ես դու
ինձ – այնքան թող լինի քո օրը
խնդուն,
Որքան մաշել ես սիրտս
սառնությամբ և քինով ահեղ,
Այնքան քեզ վայելք, այնքան սիրո
երգ, այնքան օրհնություն:

Ժամանակի վավերաթղթերի, հիշողությունների, երբեմն կցկտուր, երբեմն իրարամերժ պատմությունների մեջ տեսլանում է մեծ հայրենասերի կյանքի դրաման: Տերյանի վերջին ուղևորության հետ կապված՝ կինը՝ Անահիտ Շահիջանյանը, հայտնում է. «Նա իրեն թեթևացած էր զգում և ասում էր, որ հիմա, երբ ինքը դուրս պրծավ, կսկսի և կարող է շատ աշխատել: Անգամ նա հանեց Վեռլենը, որպեսզի թարգմանի»:

Ազգային չկայացած բախտի դրաման, անձնական դժբախտությունները, հոգնատանջ տարիները Տերյանը մի պահ թողնում էր հետևում: Վերջապես հնարավորություն կունենար նաև ստեղծագործական կյանքով ապրելու, բայց «թեթևացած էր զգում» ոչ միայն դրանից: Ըստ Շահիջանյանի հիշողությունների՝ «Պոետը Մոսկվայում էր թողնում անձնական բնույթ կրող անախորժություններ, որոնք արդյունք են եղել ստոր մարդկանց ինտրիգների և հերյուրանքների»:

Տերյանի կինը՝ Անահիտ Շահիջանյանը, և դուստրը՝ Նվարդ Տերյանը

Դ. Անանունը հիշում է. «Շիրվանզադեն հախուռն հարձակում գործեց Վ. Տերյանի վրա՝ մեղադրելով նրան հայահալած քաղաքականության մեջ: Ես պաշտպանեցի բարեկամիս ու բացատրեցի, որ, ընդհակառակը, Հյուսիսային Կովկասում հայ մտավորականներս նրա միջամտությանն ենք պարտական մեր կյանքը: Այս իմաստով էլ լուրեր տպագրվեցին Թիֆլիսի թերթերում: Իսկ այս ճշմարտապատում լուրերի հետևանքը: Մոսկվայում հայ փոքրոգի բոլշևիկների կողմից հալածանք Տերյանի դեմ, թե նա պաշտպանել է հակահեղափոխականներին: Եվ Տերյանը իր մեծասրտության պատճառով զրկվում է հայկական կոմիսարի օգնականի պաշտոնից և ստորադասվում հասարակ կոմունիստների շարքը»:

Սամարայում արդեն Մակինցյանին հղած վերջին նամակում Տերյանը գրում է. «Ես ինձ լուսավոր ու ջինջ եմ զգում, ինչպես հավանորեն իրենց զգում էին առաջին քրիստոնյաները»: Առաջին քրիստոնյաները՝ մատնված ու հալածված, բայց լուսավոր իրենց կերպարով ու վարքով, որոնք չարչարանքների ու նահատակության գնացին, բայց դավանափոխ չեղան:

Հիսունչորս օր տևած ծանր ճանապարհորդության կեսին 1920 թ. հունվարի 7-ին Օրենբուրգում, կյանքի երեսունհինգը դեռ չբոլորած, մահանում է պոետը: ➥ էջ 8

Ներսես Աշտարակեցին՝ ազգային-ազատագրական շարժման առաջնորդ

↩ էջ 3, 4

Ազգային կյանքի վերազարթոնքի, հասարակ ժողովրդի և անգամ հոգևորականության շրջանում տարածված տգիտությունը վերացնելու համար Աշտարակեցին ձեռնամուխ է լինում դպրոցաշինության՝ որպես համազգային բարիքի աղբյուրի՝ դրանով ժողովրդին փրկելով օտար ազդեցություններից: 1824 թ. Ներսիսյան դպրոցի բացումը, ապա դպրոցին կից տպարանի ստեղծումը մեծ նախաձեռնություն էին ժողովրդի մեջ ուսումնադաստիարակչական կորով, հայրենագիտական առարկաների նկատմամբ ոգևորություն արթնացնելու գործում: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն իր շուրջ մեկդարյա գործունեության ընթացքում ունեցել է 2000 ուսանող՝ որոնց թվում Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, Պ. Պռոշյանը, Ե. Լալայանը, Ռ. Զարյանը, Հ. Շիշմանյանը (Ծերենց). մեծարելի այս անունների շարքը կարելի է երկարել:

Բացի կրթամանկավարժական բեղուն և բազմարդյուն գործունեությունից՝ Վիրահայոց թեմի առաջնորդ եղած տարիներին Աշտարակեցին գործուն ներգրավվածություն է ունեցել 1804—1813 թթ. և 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներին: Ռուսական թևին հարելով՝ նա մեծ, դեռ մանկությունից եկող փափագ ուներ՝ ազատագրված տեսնել հայրենյաց երկիրը մահմեդական նվաճողներից: Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո, երբ Աշտարակեցին գեներալ Կրասովսկու հետ այցելում է հոր՝ Հարություն քահանա Շահազիզյանի գերեզմանին, արցունքն աչքերին օրհնում է Աստծուն, որ քրիստոնյա իր երկիրն ազատագրված տեսնելու հոր ցանկությունն իրականություն է դարձել, ինչպես «Իմ խոստովանությունը» օրագրում ներկայացնում է Կրասովսկու ուղեկից դեկաբրիստ Լաչինովը:

Ներսես Աշտարակեցին՝ 100 կտրիճներով, Գրիգոր եպս. Մանուչարյանը՝ 500 ղարաբաղցի ձիավորներով, իրենց մասնակցությունն են բերում 1804 թ. Ցիցիանովի երևանյան արշավանքներին: Այդ օրերին բավականին հուսահատ էր Աշտարակեցին, քանի որ Ցիցիանովը մի քանի ամիս ուշացրել էր արշավանքը դեպի Երևան՝ լեզգիների հարձակման պատճառով, և Երևանի Մահմադ խանն ամեն ճնշում գործադրում էր՝ սանձահարելու ժողովրդի ըմբոստությունն ու սադրելու եկեղեցական բարձրագույն դասի ռուսամետ հոգևորականներին:

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ՝ 1826—1828 թթ., էլ ավելի եռանդուն է գործում Աշտարակեցին. «Հասավ ժամը, երբ մեր աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և Հայոց ազգի ազատությունը, հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնի յուր վաղեմի անկախությունը: Ոտքի՛ կանգնեք, հայո՛ց քաջեր, թոթափեցե՛ք պարսից լուծը, ուրախացրե՛ք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցե՛ք հայրենի հողը և ապրեցե՛ք ազատ...»:

Հարյուրավոր երիտասարդներ, խանդավառված սրբազանի խոսքով, կազմավորում են կամավորական ջոկատներ՝ ռուսական զորքի կազմում մասնակցելով երևանյան արշավանքին: 1827 թ. մարտի 30-ին Թիֆլիսում Աշտարակեցին անձամբ կատարում է հանդիսավոր զորահանդես՝ սրտաշարժ իր ճառով ոգևորելով և օրհնելով զինվորներին: Նույն թվականի ապրիլին Աշտարակեցին ռուսական առաջապահ զորամասերի հետ, 60 հեծյալից կազմված հայկական մի ջոկատի ուղեկցությամբ, մեկնում է ռազմաճակատ, իսկ կամավորական զորաջոկատների գործի կազմակերպումը վստահում Ներսիսյան դպրոցի տեսուչ Հարություն Ալամդարյանին: Այդ ընթացքում արագ կերպով կազմավորվում են կամավորական գնդեր՝ Հայաստանի տարբեր վայրերից՝ Գանձակից, Ղազախից, Շամշադինից, Լոռուց, Ղարաբաղից միացած հայորդիների շնորհիվ: Կառավարական հանձնախմբի հաստատած կանոնադրության համաձայն՝ կամավորական ջոկատներում ներգրավվում են 18—30 տարեկան երիտասարդներ: Հրամանատարությունը ռուսական բանակի՝ ծագումով հայ զինվորականներն էին, որոնք հրամանները տալիս էին հայերեն:

Հայերի ցուցաբերած անհնազանդության պատճառով Երևանի խանության հրամանատար Հուսեին խանը կազմակերպում է տեղահանություններ հատկապես Աշտարակում՝ Ներսես Աշտարակեցու և նրա զինակից բարեկամների անզիջում գործունեությամբ պայմանավորված: Ժողովրդին ենթարկելով սովի և տեսակ-տեսակ հեծությունների՝ Հուսեին խանն արգելում է գյուղացիներին վար ու ցանք անել, դատարկել տալիս էջմիածնի ամբարները և Սուրբ էջմիածնի միաբաններին արգելափակում Երևանի բերդում՝ 18000 բնակչության հետ: Սակայն ժողովուրդն անկոտրում էր և հուսավառված ռուսների մոտալուտ հաղթանակով. «...Կուրի եզերքից մինչև Արաքսի ափերը հայք՝ հոգևորական և աշխարհական, կին և տղամարդ, մեծ ու փոքր, ամենքն աշխատում էին մասնակից լինել այդ կռուին» (Ա. Երիցեան, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, էջ 238): Աշխարհազորային ջոկատների կազմն ընդլայնելու և ռուսներին միանալու համար Աշտարակեցին հատուկ կոչով դիմում է իր համերկրացիներին՝ Աշտարակի և Օշականի գյուղացիներին, որ շուտ հավաքվեն և սեպտեմբերի 28-ին՝ մինչև արեգակի մայր մտնելը, հասնեն իրենց. «Եթե որևէ մեկը ծուլանա, թող իմանա, որ թեկուզ իմ աչքի լույսը լինի, չեմ խնայի հանել և դեն նետել»:

Ազգային-ազատագրական այս պայքարը պսակվեց ռուսների հաղթանակով, և 1827 թ.հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Երևանի բերդի գրավումը, որից հետո Աշտարակեցին բերդում մատուցեց սուրբ պատարագ:



Ներսես կաթողիկոսի ջանքերով Թիֆլիսի Հավլաբար թաղամասում հիմնադրված Ներսիսյան դպրոցի շենքը

Երևանը գրավելուց հետո Աշտարակեցին, գլխավորելով 1000 հոգուց բաղկացած զորամասը, ռուսական զորքի հետ կոչված էր պահպանելու կարգ ու կանոնը երկրում. նա ընտրվել էր ժամանակավոր վարչության անդամ: Իր անգնահատելի ծառայության համար Աշտարակեցին 1828 թ. հունվարին արժանանում է «Ալեքսանդր Նևսկի» շքանշանի. «Դուք մեր զորքերում ունեցել եք ամենագործուն մասնակցություն՝ անգամ ենթարկվելով անձնական վտանգի, Ձեր անձնական օրինակով հայ ժողովրդի մեջ մշտապես պահպանելով բարյացակամություն մեր հանդեպ» (Ծ. Աղայան, Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան, 1981 թ., էջ 271):

Ներսես Աշտարակեցին, կյանքը վտանգելով իր երկրի փրկության համար, միևնույն ժամանակ հոգ էր տանում վիրավորներին՝ այդ նպատակով էջմիածնի վանքում տեղ հատկացնելով 500 հիվանդ զինվորի՝ նրանց հանդեպ խնամք ու հայրական հոգատարություն ցուցաբերելով, ինչպես հետագայում պատմել է Երևանի բերդի պաշարման նախագծի հեղինակ դեկաբրիստ Մ. Պուշչինը:

Աշտարակեցու նպատակը, սակայն, ավելի հեռահար էր. նա ցանկանում էր Ռուսաստանի հովանու ներքո վերականգնել Հայաստանի ինքնավարությունը: 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ կետը, որը բռնագաղթված հայերի վերադարձն էր ապահովում, ամրագրվել էր Աշտարակեցու վարած բանակցությունների և ցուցաբերած մեծ ջանքերի շնորհիվ: 40 000—42 000 հայերի վերադարձից հետո Աշտարակեցին չէր դադարում կոչ ուղղել համայն հայությանը՝ վերադառնալու Արարատյան դաշտավայր և շենացնելու երկիրը, ինչպես որ ժամանակին՝ 1827 թ. հոկտեմբերի 6-ին, գրել է ռուսական բանակի գնդապետ Եղիազար Լազարյանին, որը 1828 թ. փետրվարին Պասկևիչի կողմից պիտի նշանակվեր պարսկահայերի գաղթի հանձնաժողովի պետ:

Աշտարակեցու և նրա մտերիմ ազգային գործիչների կողմից Հայաստանի քաղաքական դրությունը շրջելու ծրագրերը, սակայն, արժանանում են ռուսական կառավարության մերժմանը: Հերոսական անցյալով հայ ժողովուրդը պետք է կազմավորվեր որպես մի երկիր՝ իր զինանշանով, դրոշով, հայկական պաշտպանական գվարդիայով, ինչպես նաև ունենար իր տեղական օրենքները, իսկ Հայ Եկեղեցին էլ լիներ ինքնավար: Սակայն հայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն գործիչ, ազնվական Խաչատուր Լազարյանի՝ Հայաստանի ինքնավարության նախագիծը կյանքի կոչելու փոխարեն Նիկոլայ I-ը Ռուսական կայսրության կազմում 1828 թ. մարտին Արևելյան Հայաստանի մի մասի՝ Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքներում կազմավորում է Հայկական մարզը:

Ներսես Աշտարակեցին կաթողիկոսության տարիներին՝ 1843—1857 թթ. ևս զբաղվում է եկեղեցաշինական, կրթական ու հայապահպանական գործունեությամբ: Ի հակադրություն ցարական կառավարության կողմից պարտադրվող «Պոլժենիե»-ի՝ նա կազմում է նոր սահմանադրություն՝ կաթողիկոսի գերակա դիրքի ամրագրմամբ, նրան հաջողվում է կարգավորել Կ.Պոլսի պատրիարքության հետ հարաբերությունները: Կյանքի վերջին տարիներին Աշտարակեցին էլ ավելի զգուշավոր էր դարձել և կարծես գիտակցում էր, որ հայկական ինքնավարության ստեղծումն անիրագործելի է, քանի որ Հայկական մարզի վերացումից հետո ավելի են սրվում տարաձայնությունները:

Այնուամենայնիվ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ունեցավ պատմական նշանակություն հայ ժողովրդի համար, քանի որ վերջինս ազատվեց մահմեդական սաստկացող հալածանքներից և սպառնալիքներից, բնաջնջման վտանգից և ձեռք բերեց լայն հնարավորություններ՝ կերտելու սեփական պատմական ճակատագիրը: Այդ շրջանում հայությանը գաղափարապես առաջնորդած Ներսես Աշտարակեցուն, որպես երախտագիտություն, ժողովուրդը հիշեց «Պաշտպան հայրենյաց» անունով, ինչպես որ արձանագրված է Մայր տաճարի զանգակատան հարավային մասում ամփոփված նրա շիրմաքարի վրա: Իսրայել Օրու, Եսայի Հասան-Զալալյանի, Հովսեփ արք. Արղությանի և ռուսամետ մյուս գործիչների իրապաշտ քաղաքականության վերլուծության շնորհիվ էր, որ այս շրջահայաց ու հեռատես եկեղեցականը միայն դաշնակից Ռուսաստանի միջնորդությամբ էր տեսնում ազատագրական պայքարի արդասիքը: Իր կյանքի վերջին շրջանում ռուսական պետական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ Միխայիլ Վորոնցովին ուղղված նամակներից մեկում Աշտարակեցին հետաքրքիր մի վկայություն է հիշատակում. 1825 թ. էջմիածին այցելած անգլիացի միսիոներ Յոզեֆ Վոլֆի այն առաջարկին, որ ընդունեն անգլիական հովանավորությունը, նա կտրուկ մերժել է Կաթողիկոս Եփրեմ Ա Զորագեղցու և Մայր Աթոռի անունից. «Ռուսաց կառավարությունն ինքը կանի մեզ հայերիս համար այն ամենը, ինչ կարող է ամրապնդել հայ ժողովրդի բարեկեցությունը և բարօրությունը» (Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 97): Ժամանակի մեջ դրսևորվող նմանատիպ ընդգծված ռուսամետությունը, անշուշտ, չպետք է դիտարկել մերօրյա քաղաքականության դիվանագիտական երկխոսությունների շրջանակում, թեև ազգային գաղափարախոսությանը հարողների պահպանողական թևը միանշանակ է ընդունում Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական միությունը: Հարկ է փաստել նաև, որ սկզբունքային այս եկեղեցականը, խորապես արժևորելով և գնահատելով տվյալ պատմական հանգրվանում Ռուսաստանին ենթակայությունը, անզիջում է մնում եկեղեցական կարգի որևէ փոփոխության և հայոց դարավոր հակաքաղկեդոնական աստվածաբանական ուսմունքը օրթոդոքս քաղկեդոնական դրույթների հետ համաձայնեցման առաջարկների հանդեպ, մինչև իսկ Ռուսաստանում պետական գործիչների և ուղղափառ հոգևորականների հետ վարած բանակցությունների ժամանակ հայոց դավանանքի անփոփոխելիությունը հավաստում է հայ ժողովրդի կրոնատածությամբ և ազգային սրբազան դարավոր կրոնի նկատմամբ անսակարկ նվիրումով. «Եթէ ես ընդունիմ էլ Քաղկեդոնի ժողովը, ո՛չ մի Հայ ինձ չի հետևի, Հայեր իրենց առաքելաւանդ կրօնն անփոփոխ են պահել՝ զոհելով ամէն ինչ» (Ադդէ քհնյ. Փայլակեան, Եկեղեցական պատմութիւն հայոց, էջ 280:):

Այսպիսով՝ Ներսես Աշտարակեցին եղավ այն դարակազմիկ ազգանվեր եկեղեցական գործիչը, որը կարողացավ պատմական դժվարին ժամանակներում, օգտվելով ընձեռված որոշակի հանգամանքներից, Հայաստանի ինքնավարության վերականգնման ուղղությամբ գործուն, կշռադատված քայլեր ձեռնարկել՝ թեկուզ Ռուսաստանի ազդեցությամբ ազատագրված տեսնելու իր երկիրը և փրկված՝ իր ժողովրդին:

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ձկան և ձկնորսության խորհրդաբանությունը Հին Մերձավոր Արևելքում

➥ էջ 5

Միջագետքի ձկնորսական աշխարհը: Միջագետքի տարածքի ուսումնասիրության համար հիմնական աղբյուրները գրական տեքստերն են՝ արված գլխավորապես կավե տախտակների կամ քարերի վրա, որոնցում մեծ տեղ են զբաղեցնում հատկապես կրոնական գրվածքները: Դրանք պարունակում են տարբեր առասպելներ, աստվածությունների անվանացանկեր, օրհներգություններ, աղոթքներ և զանազան ծիսակարգեր: Պահպանված արձանագրությունները վկայում են, որ այստեղ եղել են ձկնորսության համար հստակ սահմանված կանոններ, իսկ այդ կանոնների խախտման համար նախատեսված են եղել համապատասխան պատիժներ:

Ծովային բազմազան պաշարներին հասանելիություն ունենալը և ձկնորսության ու պաշտամունքի միջև սերտ կապը նպաստավոր պայմաններ էին ստեղծում, որ Միջագետքում ձկնորսները սոցիալ-տնտեսական մակարդակում կարևոր դիրք զբաղեցնեին, բայց ձկնորսության և տաճարի միջև այդ կապը միակ հանգամանքը չէր, որ այն անկանոն ու անհատական զբաղմունքից վերածվեց ամբողջովին զարգացած և բարձր կառուցվածքային համակարգի: Ք. ա. 2100–2000 թթ. ընթացքում արդեն իսկ ձկնորսական արդյունաբերության մեջ տեղի է ունեցել աստիճանակարգության ձևավորում, ապա՝ զարգացում. տարբերակել են *«առաջնորդ ձկնորսների»* և *«հսկիչ ձկնորսների»* դասակարգեր: Ջրային բազմազան պաշարների շնորհիվ միջագետքյան ձկնորսներն աշխատում էին տարբեր տեղերում՝ տաճարի կամ որևէ անհատ կառավարչի հովանավորության ներքո: Կային, այսպես կոչված, *«բաց ծովի»* ձկնորսներ, որոնք աշխատում էին Պարսից ծոցում, ինչպես նաև՝ *«քաղցրահամ ջրերի»* ձկնորսներ, որոնք հիմնականում ներքին գետերում և ջրանցքներում էին ձուկ որսում, իսկ ավելի նրբերանգային անվանում ունեին այն ձկնորսները, որոնք ղեկավարում էին ճահճային տարածքների ձկնորսությունը. նրանց կոչում էին *«դառը ջրերի»* ձկնորսներ:



Եգիպտացի ձկնորսներ

Ձուկը՝ տաճարային զոհաբերության և առասպելաբանության մեջ: Տաճարներում ձուկը զոհաբերվում էր աստվածներին, և շատ ձկնորսներ վարձատրվում էին հենց տաճարական հեղինակությունների կողմից, իսկ ոմանք էլ պարտավոր էին իրենց որսից բաժին հանել կատարվող զոհաբերությունների համար: Յուրաքանչյուր տաճար տարբեր ծիսակատարությունների համար ուներ ձկան հստակ սահմանված թվաքանակ, և դրանց պաշտոնյաները պարտավոր էին ապահովել ճիշտ թվաքանակի պահպանումը: Ձկները, որոնք չէին իրացվում քահանաների և նրանց սպասավորների կողմից, վաճառվում էին հասարակ ժողովրդին: Մահացած նախնիների հիշատակի համար նույնպես շատ հաճախ մատուցում էին ձկներ և նույնիսկ կրիաներ: Ք.ա. առաջին հազարամյակից մեզ հասած Էսագիլա տաճարի արձանագրությունը պատմում է այն ձկնորսների մասին, որոնք որս էին անում Մարդուկ աստծու ճաշի համար (Մարդուկը Բաբելոն քաղաքի հովանավոր աստվածն էր, որին շատ հաճախ կոչում էին նաև Բել կամ պարզապես Տեր: Բաբելոնում նրա գլխավոր տաճարներն են եղել Էսագիլան և Էտեմենանկին): Յոթ ձկնորսից կազմված խումբ կար՝ հայտնի *«արմավենիների պուրակի ձկնորսներ»* անվանումով, նրանք ղեկավարում էին մեծ տարածք, որն ընդգրկում էր Էրիդու քաղաքում գտնվող Էնկի աստծուն նվիրված տաճարը (Էնկին ջրային աստվածություն էր, Էնլիլ ու Անու աստվածների հետ կազմում էր աստվածային եռյակը, առնչակցվում էր շատ հաճախ պտղաբերության հետ և ներկայացվում կես ձկան ու կես այծի տեսքով: Աքքադ.՝ Էա):

Ձկնորսական պատկերները թափանցում են նաև միջագետքյան պանթեոն: Հայտնաբերված շատ բնագրերում նկատելի է տարբեր աստվածությունների և ձկնորսության միջև ակնհայտ կապը: Դրանցից մի քանիսում պատմվում է լուսնի աստված Սինի մասին, որը հանդես է գալիս իբրև ճահճային ձկնորս և շատ է սիրում ձուկ որսալ: Արևի աստված Շամաշը կամ Սամասը կիրառում է ձկնորսական ցանց, որն իր շողերի պես տարածվում է ողջ երկրի վրա, իսկ ռազմի աստված Նինուրտան իր թշնամիների դեմ օգտագործում է տարբեր ձկնորսական ցանցեր: Լավագույն օրինակներից մեկը, որն արտահայտում է աստվածությունների և ձկնորսության միջև առկա կապը, վերաբերում է Նանսե աստվածուհուն, որն իր հայր Էնկիի կողմից օժտված էր՝ իշխելու ծովերի ձկներին և ձկնորսներին:

Ձկանը ջրից դուրս հանելու պատկերը միջագետքյան մտածողության մեջ աստվածաբանական լուրջ նշանակություն ուներ. ինչպես ձուկն էր ձկնորսի համար, անպես էլ մարդը՝ աստվածության համար. մարդկությունն ստեղծված է աշխատելու, հնազանդվելու և երկրպագելու այն աստվածներին, որոնց կողմից ստեղծվել է. այլ կերպ վարվելը կհանգեցնի լուրջ պատժի:

Քանանի ձկնորսական աշխարհը: Ի տարբերություն Միջագետքի և Եգիպտոսի՝ բրոնզի և երկաթի դարաշրջանի քանանական աշխարհը պահպանել է ձկնորսությանը վերաբերող քիչ թվով պատկերագրական նմուշներ: Ձկանը վերաբերող որոշ պատկերագրական նյութեր, որոնք հայտնաբերվել են Պաղեստինից, վերագրվում են հիմնականում մինչ երկաթի դարաշրջանին. ունեն ուշ բրոնզի դարաշրջանին բնորոշ հատկանիշներ: Կան սրանց զուգահեռները Միկենյան երրորդ դարաշրջանից հայտնաբերված որոշ նմուշների մեջ: Փղշտացիները և փյունիկեցիները իսրայելյան միապետության ժամանակաշրջանում (Ք. ա. մոտ 10-րդ դար) հսկողություն ունեին Քանանի ափերի մեծ մասի և հատկապես կարևորագույն նավահանգիստների վրա:

Դեռևս Ք. ա. 5-րդ դարում Հերոդոտոսը ձկնորսներին և նավարկողներին դասում էր սոցիալական միևնույն շերտում: Այդ ժամանակներում կատարած յուրաքանչյուր որսի համար նախատեսված էր 25 տոկոս հարկում, ինչը զգալիորեն նվազեցնում էր ձկնորսի շահույթը: Հայտնի է, որ ծովագնաց փյունիկեցիները՝ իբրև առևտրականներ, մեծապես նպաստել են այս տարածաշրջանում տեխնիկական գիտելիքների զարգացմանը:

Ձկնորսությունն առասպելաբանության մեջ: Հայտնաբերված գրական տեքստերը հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում այս տարածաշրջանի ձկնորսության խորհրդանշական դերի մասին: Ուգարիտյան շատ գրական հուշարձաններ խոսում են աստվածային ձկնորսների մասին՝ կենտրոնանալով հատկապես հետևյալ աստվածությունների վրա՝ Ատիրատու և Քադիս-վա-Ամրար. վերջինս կրում էր նաև ձկնորսի տիտղոս:

Ծովային աշխարհում Ատիրատուի ունեցած դերի մասին վկայում են նրան տրված տիտղոսը՝ *«Ծովերի և ջրերի մեծ տիկին Ատիրատու»*, և աստվածային ձկնորս Քադիս-վա-Ամրարի վրա ունեցած իշխանությունը: Այս հատկանիշները նրան նմանեցնում են Միջագետքում հայտնի աստվածություն Նանսեին, որը շատ հաճախ բնորոշվում էր որպես *«Ձկնորսների թագուհի»:* Ատիրատուի և Քադիս-վա-Ամրարի հարաբերությունները սահմանափակվում են միայն աստվածային տիրույթում, ինչին հակառակ՝ Միջագետքում Նանսեն և իր ձկնորսները կարողանում են հաղթահարել տիեզերական սահմանները՝ կամրջելով մարդկայինն ու աստվածայինը: Այդ բնագրերում ձկնորսական ցանցերը ծառայում են այս կամ այն աստվածության համար կերակուր որսալու սրբազան նպատակին:

Ուգարիտական քարե-կոթող հիշատակարաններում հանդիպում ենք կարևոր կերպարի՝ Դագոնին, որի պաշտամունքի մասին առաջին վկայությունը գտնվում է Սարգոն Աքքադացու (մոտ Ք. ա. 24–23 դդ.) արձանագրություններում, իսկ անվանական հիշատակումներ առկա են դեռևս Ք. ա. 3-րդ հազարամյակից: Թեև նրա անունն առկա է ուգարիտյան բնագրերում, այդուհանդերձ՝ շատ քիչ տեղեկություններ են տրված՝ բացառությամբ այն բանի, որ նա եղել է Բահաղի հայրը, ավելին՝ աստվածությունների որոշ ցանկերից նրա անունը երբեմն կարող է բացակայել: Թեև Դագոնն ունի հովանավոր աստվածության բնորոշ հատկանիշներ, այդուհանդերձ՝ նրա տիեզերական էությունը ոչ այդքան հայտնի է: Սկզբնապես այն համարվել է մշակաբույսերի, ավելի որոշակի՝ հացահատիկային բույսերի հովանավոր աստվածություն: Փղշտացիներն ընդունել են նրան՝ որպես գերագույն աստվածության և հատկապես ռազմի աստծու, ինչը հավանաբար փոխառել են տեղի քանանական բնակչությունից: 11-րդ դարում հրեա հայտնի մեկնիչներից Ռաշին «Դագոն» անունը կապում է եբրայերեն דָּג (dag – ձուկ) բառի հետ և նշում, որ այն պատկերվել է մարդու գլխով ու ձեռքերով և ձկան մարմնով: 20-րդ դարում, սակայն, այս տեսակետը շատ ուսումնասիրողներ մերժել են:

Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Վահան Տերյանի ազգային գործունեությունը և մահը

➥ էջ 3, 4, 6

Միակ հարազատը, անմխիթար օրերի ընկերը Անահիտ Շահիջանյանն էր, մտատանջությունը՝ ոչ թե կյանքի հեռացող ափը, այլ հայրենիքի անհայտ ճակատագիրը: Հոգեվարքի մեջ որոնող հայացքով սպասում էր մեկին. ո՞ւմ տեսիլն էր հեռվից գգվել նրան: Նրա երկրային դուռը այդ պահին բացող չեղավ: Կողքին միայն Անահիտն էր, որի կրծքի տակ բաբախում էր Տերյանի ժառանգը՝ Նվարդ Տերյանը:

«Մեկնեցինք հոկտեմբերի 25-ին (1919 թ.),– տարիներ անց պատմում է Ա. Շահիջանյանը:–....27-ի երեկոյան Սամարայում էինք: Կանգ առանք հյուրանոցում (Բորիս Գալլունով): Հարկադրված էինք կանգ առնել, որովհետև գնացքները գնում էին մինչև Սամարա, իսկ դեպի Տաշքենդ ուղղագիծ հաղորդակցություն չկար.... Հետևյալ օրվանից նա հիվանդ պառկեց: Հյուրանոցում ցուրտ էր, չէին տաքացնում. լուսամուտի ապակին ջարդված էր և չէր մեխված.....Գնացքը մեկնելու էր 18-ին, իսկ մեկնեց նոյեմբերի 22-ին: Այստեղ արդեն սկսվեցին իսկական տանջանքները.... Վահանի առողջությունը վատանում էր: 3–4 օրով մենք կանգ էինք առնում Սամարայի և Օրենբուրգի միջև ընկած փոքրիկ կայարաններում: Ուտելիք հայթայթելու համար հարկադրված էինք լինում վազվզել գյուղերը: Ոչինչ չէր ուտում: Սկսվեցին ստամոքսի ցավերը: Դա աղիքների ախտի սկիզբն էր: Երեք շաբաթ տևեց, մինչև հասանք Օրենբուրգ.... Ես արդեն տեսա, որ շարունակել ճանապարհն անկարելի է, և առաջարկեցի Վահանին, փոխանակ ուրիշ գնացք նստելու, գնալ Օրենբուրգ՝ իմ ծանոթ Օհանյանների մոտ.... Ինը վերստ մինչև Օրենբուրգ մենք գնացինք սահնակով: Երբ հասանք, նա համարյա անզգա էր.... Մի ամբողջ շաբաթ աշխատում էի բժիշկ հրավիրել, բայց բծավոր տիֆի համաճարակ էր, բոլոր բժիշկները մոբիլիզացված էին.... 28-ին առաջին անգամ բժիշկ եկավ.... Դեղորայք չէր կարելի գտնել: Ոչ մի տեղում չէր կարելի ձեռք բերել ոչ կրեոզոտ և ոչ էլ թթվածնային բարձիկներ....»: Ք. Վեքիլյանը հիշում է. «Մեր տանը խոսակցության ժամանակ նա շատ հաճախ էր հիշում «անիծած վագոնը»: Դեմքը մաշված էր, դալուկ, շարժումները արտաքուստ հանգիստ, սակայն ներվային.... Ինքնին հարց էր առաջանում. ինչի՞ց դրդված այդ վիճակում նա ձեռնարկել էր իր դժվարին ճանապարհորդությունը»:

1920-ական թթ. հալածվում էր արդեն Տերյանի գրական ժառանգությունը, հալածվում էր պրոլետգրականության դիրքերից: Տերյանի երգը չարչրկվում էր, գռեհիկ դիրքերից ակնարկվում էր անգամ բանաստեղծի հիվանդությունը. «Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, որ անխուսափելիորեն դատապարտված է մահվան.... «Հայրենիք», «Սեր անբիծ», «Անապատ ու մենություն», «Մթնշաղներ նրբակերտ», «Մոռացում ու երազներ»,– ահա մեր գրական թոքախտի մանրէները, որոնց առաջադրած պտուղներն են՝ նացիոնալիզմ, ռոմանտիզմ, պեսիմիզմ և սիմվոլիզմ...»:

Վահան Տերյանը հողին հանձնվեց Օրենբուրգում, նրա աճյունն առայսօր համարվում է անհայտ: Իսկ ներքին մի ձայն մոռացված հիշողության պես դեռ մխում է բացվող օրերի մեջ. «Դրեք սիրտս դարավոր // Հարազատ օրրան// Օրորեցեք վիրավոր // Սիրտս նահրյան...»:

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
Բ. գ. թ., դոցենտ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 17.02.2025 թ.
Տպաքանակը՝ 1265